

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ՇԵՌԱԶԱՅԻՆԱՅԻՆ ԶՐՈՅՅ ՈՒՆԵՅԱԲՕՍԱՆԻ ՍՈՒԼՔԱՆԻՆ ՇԵՏ

Շաբաթ, 2 Ապրիլ 2022-ին Սուրիոյ Նախագահ Պաշշալ ալ-Ասատի եւ Օմանի սուլթան Զայսամ Թարեք ալ-Սաիիտի միջեւ հեռաձայնային զրոյց մը տեղի ունեցաւ:



Նախագահն ու սուլթանը Նախ շտրիաւորութիւններ փոխանակեցին Ռամատանի ամսուան առիթով, երկու երկիրներուն եւ ընդհանրապէս արաբ եւ իսլամ ժողովուրդներուն մաղթելով բարօրութիւն եւ յառաջդիմութիւն:

Զրոյցի ընթացքին կողմերը սերտեցին երկու երկիրներու եղբայրական յարաբերութիւններու եւ տարբեր ոլորտներու մէջ գործակցութեան զարգացման կարելիութիւնները:

ՂԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ ԱԿԱՆՆԵՐՈՒ ՎՏԱՆԳԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՒ ՀԱԿԱՎԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԱԶԱԿՈՒԹԵԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐ

31 Մարտ 2022-ին, Սուրիոյ մայրաքաղաքին՝ Դամասկոսի ՄԱԿ-ի ակա-Նազ երծման ծառայութեան գրասենեակին մէջ տեղի ունեցաւ ականներու վտանգի իրազեկման եւ հակաականային գործունեութեան աջակցութեան միջազգային օրուան նուիրուած Նախաձեռնութիւն:

Նախաձեռնութեան յատուկ հիւրի կարգավիճակով մասնակցեցաւ Զայաստանի Զանրապետութեան Մարդասիրական Ականազերծման եւ Փոր-



ծագիտական Կեդրոնի անձնակազմը, որ Ներկայիս Զալէա Նահանգի մէջ կ'իրականացնէ ականազերծման, իսկ Դամասկոս Նահանգի Տարայա արուարձանին մէջ՝ մարտական գործողութիւններու տարածքը մաքրելու աշխատանքներ:

Խումբը Ներկայացաւ ցուցադրական ձեւաչափով, որուն ընթացքին յատուկ կահաւորուած տարածքին մէջ Ներկայացուցան խումբին աշխատանքները, անոնց ընթացքին կիրառուող գործիքները, Նշագրումի համակարգերը, հանդերձանքները, որոնք հիւրերուն հետաքրքրութիւնը շարժեցին:

Նախաձեռնութեան ընթացքին միջազգային որոշ կազմակերպութիւններու հետ ձեռք բերուցաւ համաձայնութիւն Սուրիոյ հակաականային գործունեութեան ոլորտին մէջ հետագայ գործակցութեան եւ փորձի փոխանակման մասին: Նախաձեռնութեան մասնակցած էին Սուրիոյ մէջ հաւատարմագրուած շարք մը միջազգային կազմակերպութիւններ, ի մասնաւորի Կարմիր Մահիկի, Առողջապահութեան Զամաշխարհային Կազմակերպութեան, Նորվեկիոյ Ժողովուրդի Աջակցութեան (NPA), ՄԱԿ-ի Ժողովրդազարկական զարգացման գործակալութեան, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի եւ այլ կազմակերպութիւններու Ներկայացուցիչներ:

ՍՕ ԽԱՀԻ ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿԻՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԵՅԱՆ 30 ԵՒ ԱԻԵԼԻ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԽԱՉՈՒՅԻՆԵՐ

ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը մեծարելով հայ մայրերը, այս տարի եւս արժանաւոր կերպով յիշատակեց մայրերու տօնը Զինգաքթի, 31 Մարտ 2022-ին, յետմիջօրէի ժամը 4:30-ին, «Գ. Եսայեան» սրահէն ներս:



Զանդիսութեան Ներկայ էին համայնքապետներու Ներկայացուցիչները, ԶԶ Զալէայի գլխաւոր Զիւպատոսը, ԶՕՄ-ի, ԶՄԸՄ-ի եւ Զամագայինի Կեդրոնական Վարչութեանց Ներկայացուցիչները, Պատկան Մարմնի եւ



Ազգային Վարչութեան, հալէպահայ բարեսիրական, մշակութային եւ մարզական միութիւններու եւ կազմակերպութիւններու Ներկայացուցիչներ եւ խաչուհիներ:

Լիզա Լալէան
 Շաբ.՝ 12 12

ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ՀՐԱԻՐԱԾ ՀԱՆՐԱՀԱԿՔԻՆ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐԸ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉ ՈՒՂԵՅԻՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 5 Ապրիլին, Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ տեղի ունեցաւ «Պաշտպանելով Արցախը՝ Պաշտպանեք Զայաստանը» խո-



րագիրով Ազգային Ժողովի ընդդիմադիր «Զայաստան» եւ «Պատիւ ունեմ» խմբակցութիւններուն Նախաձեռնած բազմամարդ հանրահաւաքը:



Զանրահաւաքին միացած էին շարք մը քաղաքական ուժեր, ընդդիմադիր հասարակական գործիչներ: Զանրահաւաքի Նախաձեռնողները քաղաքացիներուն կոչ կ'ուղղէին կանգնելու Արցախի եւ Զայաստանի պաշտպանութեան դիրքերուն վրայ: ԶՅԴ-ի անդամները Մատենադարանի յարակից հրապարակէն երթով ուղղուցան դէպի Ազատութեան հրապարակ:

Շաբ.՝ 12 5

Խմբագրական

ԻՆՉՈՒՒ ԹՈՒՐՔԻԱՆ ՃԻՇԴ ԱՅՍ ՊԱՅՈՒՆ ՋԱՏԱԳՈՎՆ Ե ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ

Արցախեան 44-օրեայ պատերազմին թուրքիա գորավիզ կանգնելով Ատրպեյճանին նպաստեց անոր գինուորական յառաջխաղացքին:

Ատրպեյճանի ծաւալած պատերազմին արդիւնքով արդէն իսկ իրականացաւ Չայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորման թուրքիոյ առաջին նախապայմանը, այսպէս կոչուած «*հայկական կողմին Արցախ-Ատրպեյճան սահմանային կարգ մը գիւղերէն նահանջը*»:

Տեղի ունեցաւ աւելին. Ատրպեյճան հասաւ միւլէւ Շուշի: Ատրպեյճանին Շուշիի սահմանը հատելէն ետք միայն կողմերուն գինադարարի յայտարարութիւնը կը յուշէ անկայութիւնը նախօրոք նախատեսուած ճամբաներու ապաշրջափակման ծրագիրի մը, որ կը սկսի թուրքիայէն, կ'անցնի Նախիջեանէն ու Չայաստանի սահմանէն եւ Շուշիի ճամբով կը մտնէ Ատրպեյճան:

Պատերազմէն անմիջապէս վերջ երեւան եկաւ Չայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման թե՛ մը: Ու հակառակ անոր, որ արցախեան առաջին պատերազմէն ետք, երբ հռչակուեցաւ Արցախի անկախութիւնը, Ատրպեյճան դժմ կեցաւ Չայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման, հիմա սակայն, Արցախի հողերու կորուստէն ետք, ան ջատագովներէն մէկն է այդ կարգաւորման:

Ուրբանիոյ պատերազմը աւելի արագ կշռոյթի մէջ դրաւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը, քանի որ այս պատերազմը կը ստիպէր տարածաշրջանի երկիրները վերանայիլ իրենց արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններուն:

Ինչո՞ւ այս աճապարանքը: Ատրպեյճան քաջ կը գիտակցի, որ այս պարագային, թուրքիոյ հետ միասին, պիտի ստիպէ Չայաստանը ճանչնալ իր տարածքային ամբողջականութիւնը: Այս մէկը թուրքիան եւս կը յայտարարէ բացայայտօրէն, հակառակ անոր, որ հայրենի իշխանութիւնները բազմիցս կը շեշտեն, թէ թուրքիոյ հետ յարաբերութիւնները պիտի կարգաւորուին առանց նախապայմանի:

«Մենք պիտի շարունակենք աշխատիլ երկկողմ յարաբերութիւններու առանց նախապայմաններու կարգաւորման», Անթալիոյ մէջ տեղի ունեցած ժողովին լրագրողներուն ըսաւ ԶՅ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան:

Աճապարանքի երկրորդ պատճառը Ատրպեյճանի ու թուրքիոյ Ռուսիոյ պատերազմական վիճակի մէջ ըլլալէն օգտուիլն ու անոր ազդեցութիւնը հարաւային Կովկասի մէջ թուլացնելն է: Յատկապէս նկատի ունենալով, որ արցախեան վերջին պատերազմէն ետք Արցախի ապահովութիւնը երաշխաւորողները ռուսական խաղաղապահ ուժերն են: Ռուսի թուլացնելով Ռուսիոյ ազդեցութիւնը եւ փոխարէնը ընդլայնելով թուրքիոյ ազդեցութիւնը հարաւային Կովկասի տարածաշրջանին մէջ, Ատրպեյճան ամրագրած պիտի ըլլայ Արցախի բռնագրաւումը: Աւելին. ան Չայաստանի հետ խաղաղութեան ու տնտեսական կապերու հաստատման պատրուակով իր ճնշումի օգակը պիտի ընդլայնէ ոչ միայն Արցախի, այլեւ Չայաստանի տնտեսական ոլորտներուն վրայ: Կազատար խողովակներու վերջին պայթումը օրինակ մըն էր նման քայլեր կանխատեսելու:

Ուրբանիոյ մէջ ռուսական յառաջխաղացքը կը մտահոգէ Ատրպեյճանը: Զետեւաբար որքան արագ կեանքի կոչուին ճամբաներու ապաշրջափակման ծրագիրներն ու թրքական գործօնին ազդեցութեան ընդլայնումը, Ատրպեյճան այնքան պիտի ամրագրէ Չայաստանի հետ սահմաններու ճշման իր հարցերն ու Արցախը իր տարածքային ամբողջականութեան մէջ տեսնելու նկրտումները:

Որքան ուշանայ Չայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորումը, այնքան հաւանական կը դառնայ ռուսական միջամտութեան ազդեցութիւնը, ինչ որ կրնայ Արցախին ի նպաստ ըլլալ, անոր ապահովութիւնը ամրագրելու եւ Արցախի կարգավիճակի յստակացման մէջ ԵԱՀԿ Մինսքի միջնորդութիւնը կենսունակ դարձնելու իմաստով:

Թուրքիոյ եւ Ատրպեյճանի համար յարաբերութիւններու կարգաւորման յարմարագոյն պահն է:

Չայաստան կրնայ օգտուիլ յարաբերութիւններու կարգաւորումէն միայն այն պարագային, երբ նախապայմաններու լեզուն չի խօսիր:

Փաստը սակայն հակառակը կը յուշէ: Արցախի գիւղերու վրայ եղած յարձակումները, բնակչութիւնը խուճապի մատնելու Ատրպեյճանի փորձերը, իսկ թուրքիոյ ղեկավարներուն կողմէ Չայաստանի հետ յարաբերութիւններու կարգաւորումը Ատրպեյճան-Չայաստան վերջնական խաղաղութեան հաստատման հետ կապելը հասկնալի քայլեր են այս առումով:

Չայաստանի մէջ ընդդիմութեան բողոքի ցոյցերը այս վտանգները լոյսին կը բերեն, պահանջելով հայրենիքին շահերը պահպանուած տեսնելու յանդուօն քայլեր:

«Գ.»

-Զորքէջաբթի, 6 Ապրիլ 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Դամասկոսի «Մուրախալլէք ճնուպի» շրջանին մէջ, ահաբեկիչներ պայթուցիկ ական մը լարած են անձնական ինքնաշարժի մը տակ: Ականի պայթումին հետեւանքով, ինքնաշարժին մէջ գտնուող 2 քաղաքացիներ վիրաւորուեցան եւ անմիջապէս փոխադրուեցան Դամասկոսի «Մուրախալլէք» հիւանդանոց:



- Երեքշաբթի, 5 Ապրիլ 2022-ին, «Ութան Անլայն» հաղորդեց, որ վառելանիւթի պահեստի եւ բաշխումի սուրիական ընկերութիւնը ճշդեց անձնական եւ հանրային ինքնաշարժներու պենզին ստանալու ժամանակամիջոցը: Ընկերութեան որոշումին համաձայն, անձնական ինքնաշարժները պենզին կրնան ստանալ 10 օր անգամ մը, հանրային ինքնաշարժները՝ 6 օր անգամ մը, իսկ մեքենականացած հեծանիւները՝ 10 օր անգամ մը: Ընկերութիւնը յայտնեց, որ վառելանիւթի բաշխումի քանակը պիտի մնայ ինչպէս որ էր, առանց փոփոխութեան:



-Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը 6 Ապրիլին յայտարարեց, որ երկրին մէջ վերջին շրջանին պսակած եւ ժահրով վարակուողներուն թիւը նկատելի նուազում արձանագրած է: Նախարարութեան առողջապահութեան ինստիտուտի գրասենեակի տնօրէնուհի Ռազան Թարապիշի ՍԱՆԱ-ին յայտնեց, որ Սուրիոյ նահանգներու հիւանդանոցներուն մէջ պսակած եւ ժահրով վարակուողներուն թիւը նուազած է, իսկ վարակուողներուն մէջ համարեա՛ չկան պատուաստուած քաղաքացիներ, ինչ որ կը վկայէ պատուաստին բարեբար ազդեցութեան մասին:



- Զովանաւորութեամբ Բերիոյ Չայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի, նախագահութեամբ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Զոզ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի, Կիրակի, 2 Ապրիլ 2022-ի առաւօտեան Ճեզիրէի երեք շրջաններուն՝ Գամիշլիի, Զասիչի եւ Տերիքի մէջ տեղի ունեցաւ Ազգային ժողովի երեսփոխաններու ընտրութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը բերին գաղութի գաւակները: Ընտրութիւնը տեղի ունեցաւ խանդավառ մրթնուլորտի մէջ, նկատի ունենալով, որ Սուրիոյ պատերազմի տասը տարիներուն, երկրի պայմաններուն բերումով, Ճեզիրէի շրջանները ներկայացուցիչ չունէին Ազգային ժողովին մէջ:



Ըուեներու արդիւնքով երեսփոխաններ ընտրուեցան. Բժշկ. Անդրանիկ Սարգիսեան Տիար Աբիկ Զեհիայեան Տիար Արմէն Նալպաստեան:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ԻՐԱՌՈՒՆԵ ԶՈՒՆԻՆԵ ԱՅՍ ՊԱՅՔԱՐԻՆ ՄԵՋ ԶԱՆՈՂԵԼՈՒ»

ՀՀ Գերագույն Սարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեան «5-րդ ալիք» պատկերասփիւռի կայանի «Հարցազրույց» յայտագիրեն յայտնած է, որ 6 Ապրիլին պիտի պայքարի նոր փուլը, եւ հիմնական նպատակն է թոյլ չտալ, որ Փաշինեանի իշխանութիւնները Հայաստանի ու Արցախի հաշուոյն զիջումներու երթան: Ըստ Իշխան Սաղաթելեանի, ընդդիմութիւնը հետեւողական պիտի ըլլայ իր պահանջներուն մէջ ու պայքարը պիտի հասցնէ յաղթական արարտի: «Իրաւունք չունինք այս պայքարին ձախողելու», ըսաւ Սաղաթելեան: Յիշեցնենք, Երեքշաբթի, 5 Ապրիլի ժամը 18:30-ին, Ազատութեան հրապարակին վրայ տեղի պիտի ունենայ ընդդիմութեան հանրահաւաքը: Մէկ օր առաջ ՀՀ Գերագույն Սարմինի ներկայացուցիչ, Ազգային ժողովի փոխնախագահ Իշխան Սաղաթելեան բացատրած էր հանրահաւաքին նպատակը. ան ըսած էր, որ Հայաստանի քաղաքացիները կը հրաւիրուին հանրահաւաքի, որպէսզի իրենց ներկայութեամբ «ոչ» ըսեն այս իշխանութիւններու պարտուողական քաղաքականութեան, որ մեր երկիրը կը տանի դէպի կործանում եւ անդունդ:



ՀԱՆՐԱՅԻՄԻ ԵԶՐԱԾԱԿԻՉ ԶԱՐԱՔԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ. «ԲԱՅԱՌԵԼ ԱՐՅԱՆԻ ՈՐԵԷ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿԱԶՄԻՆ ՄԵՋ»

6 Ապրիլ 2022-ին Ազատութեան հրապարակին մէջ «Հայաստան» դաշինքի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ յանուն Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան հանրահաւաք, որ յանգեցաւ հետեւեալ յայտարարութեան.

«Յանուն Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան հրաւիրուած հանրահաւաքի մասնակիցներս, անկախ մեր գաղափարաբանական եւ քաղաքական տարբերութիւններէ, վճռականօրէն մերժում ենք թուրք-ատուրք-պէյճանական տանդէմի կողմից պարտադրուող օրակարգերը: Խաղաղութեան նախադրեալներ ստեղծելու համար Ատրպէյճանը պետք է վերադարձնի հայ ռազմագերիներին, պատանդներին, այլ պահուող անձանց, ազատագրման դատապարտուածներին, իր գորքերը հեռացնի ինչպէս Հայաստանի ինքնիշխան տարածքներէ, այնպէս էլ Արցախի տարածքում 9 Նոյեմբեր 2020-ի դրութեամբ դիրքերին:

Մենք՝ հանրահաւաքի մասնակիցներս, յայտարարում ենք, որ առաջնորդուում ենք հետեւեալ հիմնարար սկզբունքներով.
– հաստատել, որ Հայաստանի Հանրապետութիւնն Արցախի ժողովրդի անվտանգութեան եւ ինքնորոշման իրաւունքի իրացման երաշխաւորն է՝ բոլոր բաղադրիչներով,

ԱՐԱՐԱՏ ՄԻՐՉՈՅԵԱՆՆ ՈՒ ՀՀ-ՄԲ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՉՈՏԻՆ ԱՍԵՂՈՒՄԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

4 Ապրիլին ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է Մեծ Բրիտանիոյ համայնքներու պալատի՝ Հայաստան-Մեծ Բրիտանիա խորհրդարանական բարեկամական խումբի պատուիրակուիները, որ կը գլխաւորէր խումբի ղեկավար Թիմ Լուրժն:

Հանդիպումի ընթացքին գրուցակիցները կարեւոր համարած են Հայաստանի եւ Միացեալ Թագաւորութեան միջեւ յարաբերութիւններու հետագայ խորացումը եւ ամրապնդումը՝ շեշտելով նաեւ խորհրդարանական դիւանագիտութեան դերը այս առումով:
Անդրադարձ կատարուած է Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներու գործընթացին: Բրիտանացի խորհրդարանականները բարձր գնահատած են Հայաստանի կողմէն գրանցած ժողովրդավարական յառաջընթացը: Արարատ Միրզոյեան վերահաստատած է ՀՀ կառավարութեան յանձնառութիւնը՝ շարունակելու ժողովրդավարութեան ամրապնդման, օրէնքի գերակայութեան, մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ փտածութեան դէմ անգիշում պայքարի գործընթացը եւ գնահատած է Միացեալ Թագաւորութեան աջակցութիւնը:

Կողմերը քննարկած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան զօտիին եւ Հայաստան-Ատրպէյճան սահմանագօտիին ստեղծուած իրավիճակը: Նախարար Միրզոյեան մանրամասն ներկայացուցած է ատրպէյճանական զինեալ ուժերու կողմէն Լեռնային Ղարաբաղի Փառուխ գիւղ ներխուժումը, քաղաքացիական բնակչութեան եւ ենթակառոցներու թիրախաւորումը, Արցախի մէջ մարդկային ճգնաժամ ստեղծող գործողութիւնները, Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած տարածքներու մէջ հայկական մշակութային ու կրօնական ժառանգութեան պաշտպանութեան հետ առնչուած հարցերը:

Արարատ Միրզոյեան կարեւոր համարած է բրիտանացի խորհրդարանականներուն ջանքերը՝ 44-օրեայ պատերազմի ընթացքին ատրպէյճանական զինեալ ուժերուն կողմէ մարդու իրաւունքներու խախտումներուն եւ վերջին շրջանին Հայաստանի հետ սահմանագօտիին եւ Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի յարձակողական գործողութիւններուն դատապարտումին եւ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրաւունքներու պաշտպանութեան սատարման գծով:

Հիւրերու խնդրանքով՝ նախարար Միրզոյեան անդրադարձած է նաեւ Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին:



- բացառել Արցախի որեւէ կարգավիճակ Ատրպէյճանի կազմում,
- բացառել առանց Հայաստանի հետ յուսալի ցամաքային կապի Արցախի անկախութիւնը վիճակը,
- քայլեր ձեռնարկել 1994 թ. ԵԱՀԿ գագաթաժողովի որոշմամբ ամրագրուած ձեւաչափով եւ նպատակներով բանակցային գործընթացի վերականգնման ուղղութեամբ,
- բացառել Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան հաշուին հարողակցութեան ուղիների ապաշրջափակման անուան տակ միջանցքների տրամադրումը,
- Ատրպէյճանի կողմից ուժի կիրառման եւ ուժի կիրառման սպառնալիքի պայմաններում բացառել ցանկացած միջպետական պայմանագրի ստորագրում եւ սահմանագատման ու սահմանագծման ցանկացած գործընթաց,
- չստորագրել Ատրպէյճանի հետ որեւէ պայմանագիր, որը կը խախտի Արցախի ինքնորոշման իրաւունքի՝ առանց սահմանափակումների իրացումը,
- Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններում բացառել որեւէ համաձայնութիւն, որը հարցականի տակ կը դնի հայ ժողովրդի հայրենագրկման եւ ցեղասպանութեան իրողութիւնը, ինչպէս նաեւ հայութեան հոգեւոր-մշակութային ժառանգութեան կրողը լինելու իրաւունքը:
- Այս սկզբունքները բխում են հայ ժողովրդի կենսական շահերից, ուստի ցանկացած իշխանութիւն պարտաւոր է առաջնորդուել այս օրակարգով եւ ապահովել դրա իրականացումը: Այս օրակարգի առաջադրումը չի նշանակում պատերազմ, այլ հայ ժողովրդի կենսական շահերի հաշուառմամբ իրական, արդար եւ արժանապատիւ խաղաղութիւն հաստատելու պատրաստակամութիւն:
- Ներկայացուած սկզբունքների չիրագործումն անխուսափելիօրէն կը հանգեցնի համաժողովրդական լքիտիմ հակադէմոստրացիան բոլոր հնարաւոր միջոցներով եւ եղանակներով:
- Սոյն յայտարարութիւնը բաց է ներկայացուած օրակարգը կիսող անհատների, հասարակական կազմակերպութիւնների եւ կուսակցութիւնների համար:

Ազատութեան հրապարակ
5 Ապրիլ 2022թ. »
«Հայաստան Դաշինք»

ՀՅՌ ԲԻՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԽԱԺԱԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԽՕՍՔԸ ՀՅՌ ՕՐՈՒՄՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

3 Ապրիլին Կլենտոյի մէջ տեղի ունեցած ՀՅՌ տօնակատարութեան ընթացքին ՀՅՌ Բիւրոյի անդամ Խաժակ Մկրտիչեանի խօսքը.

«Ես այսօր գերծ պիտի մնամ երկար խօսելու եւ կացութեան վերլուծումը ներկայացնելու:

Խօսքս պիտի սկսիմ վերջերս բազմաթիւ առիթներով ու պատճառներով հնչած լուրջ մտահոգութեամբ, որ այսօր ազգովին կը գտնուինք ճակատագրական մեծ վտանգի մը առջեւ, ուր մեր դարաւոր թշնամին, լկտիացած ախորժակներով կը փորձէ կը սպառնալ բոլորիս հայրենիքի գոյութեան:

Օգտուելով աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային իրերու դասաւորումէն եւ Հայաստանի իշխանութեան պարտուողական քաղաքականութենէն՝ արիւնարբու թշնամին կը փորձէ իր լրումին հասցնել հայ ազգը բնաջնջելու եւ հայկական պետականութեան հիմքերը խարխլելու իր վաղեմի երազանքը:

Օրհասական այս պահուն, մենք իրաւունք չունինք կքած մնալու 44 օրեայ պատերազմի ներքին ու արտաքին ուժերուն կողմէ մեր ուսերուն բեռնուած պարտութեան եւ պարտաւոր ենք համազգային դիմադրութեամբ կասեցնելու այս գահավեժ ընթացքը, մերժելու մեր ազգի ու հայրենիքի անժամանցելի իրաւունքներու հաշուոյն իբր թէ խաղաղութեան դարաշրջան բանալու գազրախօսութիւնը:

Մեզ առաջնորդողը պիտի ըլլայ այս կամ այն աւագակապետի ձեռքով գծուած քարտեզները պատմելու Բրիտանիոյ կամքը: Եւ մենք այսօր եկած ենք նշելու այդ կամքի ծնունդը՝ հանդիսացող կազմակերպութեան 131 ամեակը:



Այն կազմակերպութեան, որ առաջինը հնչեցուց ազգին ու հայրենիքին սպառնացող վտանգին մասին եւ հայրենակործան քաղաքականութեան կրողներուն լրջանալու եւ ինքնասրբագրման կոչ ուղղեց:

Այն կազմակերպութեան, որ իր լոյս անդամներու արեան գնով առաջինը շտապեց հայրենիքի սահմաններու աննահանջ պաշտպանութեան: Այն կազմակերպութեան, որուն հաւատաւոր մարտիկը դաշնակցական իր մկրտութիւնը Հայկազի մէջ ստանալէն ետք՝ կ'երթար եւ կը նահատակուէր յանուն Շուշիի պաշտպանութեան:

Այն կազմակերպութեան, որ այսօր եւս պայքարի առաջին գիծերուն վրայ կանգնած՝ համազգային դիմադրութեան կոչ կ'ուղղէ ազգի գաւակներուն, որպէսզի հաւաքական կամքով ջարդուին Հայաստանի ու հայութեան գլխին հիւսուած դաւադիր ծրագիրները:

Արիւնտ դրօշով գարդարուած այս բեմէն, պահի լրջութեան ամենախոր գիտակցութեամբ, կոչ կ'ուղղէմ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարին, գործին, պատմութեան ու առաքելութեան բոլոր հաւատացողներուն՝ Դաշնակցութեան շարքերէն ներս թէ դուրս Դաշնակցականի երդումը տուած կամ չտուած Երիտասարդ թէ երեց Կին թէ տղամարդ Յառաջ, Յառաջ դէպի խրամատ:

Դէպի կամաւորագրութեան խրամատ: Դէպի քաղաքական պայքարի խրամատ: Դէպի քարոզչական կռիւի խրամատ: Դէպի գիտական կարողականութիւնը ներդնելու խրամատ: Դէպի նիւթական հնարաւորութիւն ստեղծելու խրամատ: Բոլորս համոզուած պիտի ըլլանք, որ անձն ու անձնականը շատ ճղճիմ են հայրենի հողի նոյնիսկ ամենափոքր կորուստին դիմաց:

Ազգովին, Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, այսօր կանգնած ենք մեր ուժերը լարելու հրամայականին առջեւ, կատարելու համար Արցախին ու Հայաստանին տեր կանգնելու մեր առաքելութիւնը: ՀՅՌ 34-րդ Ընդհանուր Ժողովը բոլորիս վրայ պարտք դրած է. «Ողջ ներուժով, համահայկական կառոյցի կարողականութեամբ եւ նուիրումով» պաշտպանել Հայաստանի եւ Արցախի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը:

ՀՅՌ Բիւրօն իր վերջին յայտարարութեամբ կը շեշտէր Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակի կողքին կանգնելու եւ հնարաւոր բոլոր միջոցներով աջակցելու անոր, որպէսզի ապահովուի Արցախի ժողովրդի անվտանգութիւնը: Իսկ այս բոլորը ի կատար ածելու համար անհրաժեշտ է անսակարկ պայքար բոլոր ճակատներու վրայ եւ բոլորին մասնակցութեամբ:

Միայն այսպէս կարելի է միս ու ոսկոր տալ համազգային այն դիմադրութեան, որուն վրայ կրնան ջարդուիլ մեր ազգի անժամանցելի իրաւունքները անտեսող եւ հայրենիքի անվտանգութիւնն ու ինքնիշխանութիւնը վտանգող ներքին ու արտաքին բոլոր ծրագիրները»:

ԱՆԹԻԼԻԱՄԻ ՈՒԽՏԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԹԻՒ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱԶՈՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՒԱԿՆԵՐԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայոց աշխարհին մէջ ամրապնդեց հայկական ինքնութեան հիմնաքար հանդիսացող քրիստոնէութիւնը եւ իր հաւատքին ու կամքին շնորհիւ ամբողջ ազգ մը դարձի բերաւ: Իր այս առաքելութեան ընթացքին ան դիմագրաւեց բազմաթիւ սոսկալի չարչարանքներ, որոնց յիշատակութիւնը հայ եկեղեցին կը նշէ Գալստեան Կիրակիին: Լուսաւորիչի մուտն ի վիրապ տօնին կը նշենք նաեւ հայրապետարանիս ուխտի տօնը՝ Մայրավանքին համանուն Տաճարին նուիրուած:



Առ այդ, Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, նախագահութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին, Վեհարանի դահլիճէն սկիզբ առաւ Հայրապետական թափօրը, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հոգեւոր հարստութիւնը համարուող սրբազան մասունքներու արկղով մուտք գործեց Մայր Տաճար: Ս. Եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց մայր Տաճարի լուսարարապետ Գերշ. Տ. Կոմիտաս Արք.

Օհանեան: Սրբազանը իր քարոզը սկսաւ Լուսաւորիչի վիրապ մուտքի շարականի խօսքերով, որ արտայայտութիւն է ցնծութեան եւ իրաւեր՝ աղօթքի ու ապաշխարութեան: Ան ըսաւ, որ այսօր մենք Եակաւօրէն կարիքը ունինք աշխարհով մէկ հոգեւոր արթնութեան:



Սրբազանը ամփոփելով տօնին պատգամը՝ նշեց, որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ ընդհանրական եկեղեցւոյ մեծ սուրբն է: Ան ոչ միայն հայոց հաւատքի կերտիչն է, այլեւ հայ քրիստոնէայ ազգին կերտիչը: Սրբազան հայրը իր քարոզը եզրափակեց՝ վստահեցնելով, որ իւրաքանչիւր հաւատացեալ հաւատքի իր գօրութեան չափով կը ստանայ ամեն ինչ, որ կը խնդրէ սուրբէն՝ որովհետեւ սուրբերուն մէջ Բրիտանոյ կը բնակի:

Ս. Պատարագի աւարտին, Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ տեղի ունեցաւ սուրբին լուսաւորող Ազով ասանդակական թափօր: Յայտնենք, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի Ս. Աջին կողքին հաւատացեալ ժողովուրդը օրհնուեցաւ նաեւ եկեղեցւոյ մեծագոյն սուրբերէն՝ Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս հայրապետներու աջերով, ինչպէս նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանը ի պահ դրուած այլ սրբազան մասունքներով: Թափօրի աւարտին, Նորին Ս. Օծութիւնը միաբան հայրերու ընկերակցութեամբ, բարձրացաւ Ս. Խորան եւ Լուսաւորիչի սրբազան Ազով կատարեց ջրօրհնէքի արարողութիւն: Ապա, Մայր Տաճարի խորանին վրայ գետեղուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին, Ս. Սեղբեստրոս եւ Ս. Նիկողայոս Հայրապետներուն աջերը, որոնք միաբան հայրերու հսկողութեան ներքեւ Խորանին վրայ մնացին մինչեւ ուշ երեկոյ:

«ՊԱՏՐԱՍ ԵՄ... Սկիզբ՝ էջ 9

մար վիրաւոր մայրս ձգել եւ հեռանալ: Յառաջացած տարիքիս բոլոր դժուարութիւնները կը փորձեմ յաղթահարել, որպէսզի ծառայեմ սուրիական Հայրենիքին եւ օգտակար դառնամ սուրիահայ մեր գաւակներուն:

Փառք ու պատիւ մեր նուիրեալ ազգային մարդկանց, շնորհակալութիւն Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, Ազգ. Իշխանութեան, Կրթասիրաց Մշկթ. Միութեան Կնամակալութեան, Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ վարժարանի Հոգաբարձութեան եւ ողջ անձնակազմին:

«Գանձասար» - Ի՞նչ է ձեր յորդորը հասակ առնող հայ սերունդներուն:

– Փափաքս է, որ մեր գաւակները եւ աշակերտները պահպանեն իրենց հայութիւնն ու ազգասիրութիւնը եւ ուր որ ալ գտնուին ուշադիր ըլլան, որ հայուն անունը բարձր պահեն: Այս մէկը կ'իրականանայ, երբ իրենք հայերն լեզուին լաւապէս կը տիրապետեն եւ հայոց պատմութիւնը միշտ կը յիշեն: Հայոց Յեղասպանութեան յիշատակումի Ապրիլ ամսուան մէջ, վարժարանի շրջափակէն ներս հայերն եւ ազգային երգեր կը սփռենք, որպէսզի մեր աշակերտներուն ականջները լեցուին հայերէն երգերու բովանդակալից բառերով:

Այս առիթով, շնորհակալական խօսքս կ'ուղղեմ «Գանձասար» պաշտօնաթերթի խմբագրակազմին, որ պատնէշի վրայ մնալով կը շարունակէ սուրիահայութեան աշխոյժ գործունէութեան մասին արձագանգել:

ՑՆՈՐԱՄԻՏ ՕՍՄԱՆԵԱՆ ՍՈՒԼՔԱՆՆԵՐԸ ՍՊԱՆԱԾ ԵՆ ԻՐԵՆՑ ԵՂԱՎՅՐՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ ՊԱՅՏԻ ՊԱՅՏԻՆԵՐԸ ԿՐԻՍՏՈՍ



Յարութ Սասունեան

Բոլորս գիտենք, որ Օսմանեան բանակը անողոք դաժանութեամբ գրաւած է բազմաթիւ երկիրներ: Նաեւ գիտենք, որ Օսմանեան Կայսրութիւնը զանգուածային սպանութիւններ եւ ցեղասպանութիւններ իրականացուցած է միլիոնաւոր հայերու, ասորիներու, յոյներու եւ քիւրտերու հանդէս: Սակայն քիչերը գիտեն, որ Օսմանեան սուլթանները սովորաբար սպանած են իրենց ընտանիքին անդամները:

Վերջերս, YouTube-ի վրայ անհաւատալի տեսանիւթ մը դիտեցի, ուր փաստագրուած էր օսմանեան սուլթաններու բարբարոսական վարքագիծը: Տասներեք վայրկեան տեսողութեամբ տեսանիւթի համաձայն՝ օսմանեան ղեկավարները զբաղած են «յոռի եւ կործանարար գործերով»: Տեսանիւթը վերնագրուած է՝ «Չարիւրեղի բաներ, որոնք «բնական» էին Օսմանեան Կայսրութեան մէջ»: YouTube ցոյց կու տայ, որ տեսանիւթը տեղադրուած է 15 Դոկտեմբեր 2021-ին, եւ վեց ամիսէն նուազ ժամանակահատուածի մէջ զայն դիտած է 640 975 հոգի, որուն 10 հազարը հաւնած է տեսանիւթը: Ասիկա կը նշանակէ, որ աւելի քան 640 հազար հոգի այժմ տեղեակ է օսմանեան սուլթաններու դաժանութիւններէն:

Ահա՛ տեսանիւթի մասնակի տղաբոլորները:

«Երբ (Սուլթան) Մեհմետ Նուաճողը պաշարեց Կոստանդնուպոլիսը, անոր հօրեղբայրը պատերու վրայէն կը կռուէր անոր դէմ: Օսմանցիին բնորոշ ձեւով Մեհմետ անողորմ վարուեցաւ իր հօրեղբոր հետ եւ գահը վերցնելէ ետք պատգամ յղեց օսմանցիներու ապագայ սերունդներուն: Ան սկսաւ հաւաքել արական սեռի իր բոլոր ազգականները եւ մահապատիժի ենթարկեց զանոնք: Իր անխղճութեամբ ան չխնայեց նոյնիսկ կրտսեր եղբորը, որ նորածին մանուկ էր օրօրոցի մէջ: Մեհմետ առանց աչքը թարթելու շնչահեղձ ըրաւ զայն: Երբ մէջտեղէն վերցուց գահի համար իր բոլոր հաւանական յաւակնորդները, Մեհմետ յայտարարեց. «Իմ գաւազը, որուն որ պիտի անցնի սուլթանութիւնը, տեղին է, որ յանուն աշխարհակարգի, սպաննէ իր եղբայրները: Ուլեմայի (բարձրաստիճան կրօնական առաջնորդներու) մեծ մասը թոյլ կու տայ այս արարքը: Ուրեմն թող գործեն այսպէս»:

«Այսպիսով սկիզբ առաւ սերունդներու քաղաքացիական պատերազմներու շարքը, երբ իւրաքանչիւր յաջորդ սուլթան՝ Օսմանեան Կայսրութեան իրաւայաջորդը, ստիպուած էր ձեռքերը թաթխել իր եղբայրներուն, զարմիկներուն եւ հօրեղբայրներուն արեան՝ գահը պահպանելու համար: Կ'ըսուի, որ ուրիշ

Մեհմետ մը՝ Մեհմետ Գ. այնքան սրտնեղած էր, որ հոգեվարքի մէջ մօրուքը կը փետեր, երբ կրտսեր եղբայրը ողորմածութիւն կ'աղերսէր եւ նորէն ու նորէն կ'երդնուէր, որ երբեք զենք չի վերցնէր իր դէմ: Սակայն, պարտաւորուած՝ ընտանեկան ականդոյթներով, Մեհմետ Գ. առանց որեւէ խօսք ըսելու շրջուեցաւ, եւ հաւատարիմ մարդիկ սպանեցին տղան՝ Մեհմետ Գ. ի միւս 18 եղբայրներուն հետ: Բոլոր 19 եղբայրներուն մարմինները ինկած էին Սթամպուլի փողոցները, եւ կ'ըսէին, որ այդ գիշեր ամբողջ քաղաքը կ'ողբար մահացածներուն հոգիներուն համար: Նկատի ունեցէ՛ք, որ նոր սուլթանի գահակալութենէն յետոյ սպանութիւնները պիտի չդադրէին: Թագաւորական ընտանիքի բոլոր ազգականներուն որսը պիտի շարունակուէր անողոքաբար»:

«Նոյնիսկ Սուլեյման Զոյակապի ձեռքերը մաքուր չէին, քանի որ ան փողոցին մէջ աղեղնալարով խեղդամահ ըրած էր իր գաւազը միայն այն պատճառով, որ վերջինիս ժողովրդականութիւնը խելագարութեան ինկողի դարձած էր օսմանցիներու ամենէն նշանաւոր սուլթանին համար»:

«Սակայն, երբ 1617-ին, Ահմետ Ա. յանկարծամահ եղաւ, ընդհանուր համաձայնութիւն մը կնքուեցաւ ազգականներու եւ անոր թողած ընտանիքին միջեւ: Այս անգամ Սթամ-



պուլի փողոցները թագաւորական արիւնով ողողելու փոխարէն, հոգեւորականները հանդարտօրէն հաստատեցին առաջնեկութեան կիրառութիւնը (առաջնեկներու իրաւայաջորդութեան իրաւունքը) եւ նոր սուլթան յայտարարեցին անոր կրտսեր եղբայրը՝ Մուսթաֆա Առաջինը, քանի որ Ահմետի որդիները չափազանց երիտասարդ էին կառավարելու համար: Իրեն՝ Մուսթաֆային, խնայած էր իր եղբայրը՝ Ահմետ Առաջինը, քանի որ 12 եւ 13-ամեայ եղբայրները չափազանց մօտիկ էին իրարու եւ դժուար թէ մէկը միւսին մահը պատուիրէր»:

«Այդ ժամանակէն սկսեալ ազգականները սպանելու քաղաքականութիւնը փոխարինուեցաւ անոնց կալանաւորումով: Զնարաւոր գահաժառանգները բանտարկելու էին Թոփքափի պալատին մէջ: Սթամպուլի մէջ այս յատուկ կացարան-

ները կը կոչուէին «քաֆես», որ կը նշանակէ «վանդակ»: Օսմանեան կայսրութեան իշխանը, կրնայ ըլլալ որ իր ամբողջ կեանքը բանտարկուած անցընէր «քաֆես»-ի մէջ՝ օր ու գիշեր պահակներու հսկողութեան տակ: Այս իշխանները ստացած են ամեն տեսակ շքեղութիւն եւ կրնային վարել արքայական ցեղին վայել ճոխ ապրելակերպ, սակայն անոնց դէմ խստօրէն կիրարկուած են տնային կալանքի սահմանափակումները: Այս պատճառով շատ իշխաններ խելագարած են ծանծրոյթէն կամ դարձած են խիստ անառակ: Երբ նոր սուլթանը կը բերէին (Պալատի) Երջանկութեան դարպասներուն մօտ՝ վեզիրներու (Նախարարներու) հաւատարմութիւնը ստանալու համար, այդ առաջին անգամը կ'ըլլար, որ ան տասնամեակներու ընթացքին դուրս կ'ելլէր «վանդակ»-էն...: Ոչ իտեալական Նախապատրաստական ընթացք մարդու մը համար, որ պիտի դառնար տիրակալ, այդպէս չէ՞: Թեկուզ ծիսական քաղաքացիական պատերազմները վերջ ունեցան, այսուհանդերձ, սակայն, թագաւորին ազգականները շարունակեցին

ապրիլ՝ իրենց գլուխը ամեն վայրկեան կորսնցնելու մնայուն վախով»:

Տեսանիւթի երկրորդ մասով կը ներկայացուի սուլթանի մեկուսացուած կեանքը պալատին մէջ՝ իր բազմաթիւ հարճերուն հետ հարեմի մը մէջ, որ կը գտնուէր սուլթանին մօր վերահսկողութեան տակ: Մենք գիտենք, որ, ցաւօք, այդ կիներէն քանի մը հատը եղած են երիտասարդ հայ աղջիկներ: Տեսանիւթի անանուն հեղինակը նկարագրած է նաեւ գլխատումները պալատին մէջ եւ այն երկու սիւնները, որոնցմէ կը կախուէին կտրուած գլուխները:

Այսուհետեւ, եթէ ունէ մէկը ձեզի ըսէ, թէ Օսմանեան Կայսրութիւնը եղած է հանդուրժող եւ քաղաքակիրթ, կրնաք անոր առաքել այս յօդուածին պատճէնը կամ յղում ընել *Եռութեան* վերոնշեալ տեսանիւթին: Այս երկուքը կը լռեցնեն այդպէս արտայայտուողները:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան**

ԸՆԴՊԻՍՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

եան հրապարակ: Զանրահաւաքի մասնակիցները բարձրացուցած էին հետեւեալ գրութիւններով պաստառներ. «Արցախը երբեք չի լինելու Ատրպէյճանի կազմում», «Թուրքն իմ թշնամին է», «Զայաստանը թրքական միջանցք չէ», «Նիկոլը չի ներկայացնում հայկական շահը», «Recognize Artsakh»: Անոնք կը վանկարկէին «Զայաստան, ոտքի», «Առանց Նիկոլ Զայաստան», «Արցախը չի լինելու Ատրպէյճանի կազմում»:

Ելոյթներով հանդէս եկան Ազգային ժողովի պատգամաւորներ Արամ Վարդեանեան, Տիգրան Աբրահամեան եւ Զայկ Մամիջանեան: ԶՅԴ Զայաստանի ԳՄ ներկայացուցիչ, ԶԶ ԱԺ փոխնախագահ, «Զայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթելեան իր խօսքին մէջ վերառաւ Արցախի իրավիճակին առնչուած հիմնական չորս կետեր ու ըսաւ.

«Առաջին. այսօր պատմական օր է, որովհետեւ դուք այսօր ձեր մասնակցութեամբ, ձեր վճռականութեամբ վերջ տուիք այն բոլոր խօսակցութիւններուն, որոնց համաձայն հայ ժողովուրդին չի հետաքրքրէր Արցախը, դուք վերջ տուիք այն խօսակցութիւններուն, թէ մենք պետութիւն ունենալու իրաւունք չունինք, որ մենք համակերպուած ենք այս իրավիճակին, դուք այսօր վերջնականապէս սկիզբ դրիք հայ ժողովուրդի պարտութեան էջի փակման ընթացքին:

Երկրորդ. քիչ առաջ մեր բոլորին անունով հնչեցին այն հիմնական սկզբունքները, որոնցմով պետք է առաջնորդուինք: Անոնք հայ ժողովուրդին կենսական շահերու պաշտպանութեան արտայայտութիւնն են: Ուրեմն ելէ՛ք այս հրապարակէն միասնաբար յայտարարեք, որ որեւէ իշխանութիւն, որ կը շեղի մեր կենսական պահանջներէն, պիտի տապալի: Այն քաղաքական ուժը, այն անհատը, այն իշխանութիւնը, որ կը շեղի այս պահանջներէն, դուք՝ մեր ժողովուրդը, իրաւունք ունի հակազդելու, տապալելու գինք եւ երկրին ողնաշարը շտկելու:

Երրորդ. այսօր մենք այս հրապարակէն արձանագրեցինք, որ տեղ եւք Արցախին, տեղ եւք Զայաստանին եւ ամենակարեւորը՝ պատրաստ ենք պաշտպանելու մեր հայրենիքը:

Չորրորդ. դուք, այսօր ձեր ներկայութեամբ, ձեր վճռականութեամբ յայտնեցիք, որ այս իշխանութիւնները չունին ժողովուրդին կողմէ հովանաւորուած խաղաղութեան կեղծ լուրջներով երկիրը նոր գիշումներու առաջնորդելու իրաւունք»:

Սաղաթելեան յայտարարեց, որ հանրահաւաքը պիտի աւարտեն հետեւեալ ձեւով. «Զիմա միասին պիտի երթանք Ֆրանսայի հրապարակ եւ փակենք հրապարակին չորս մուտքերը, պիտի դադարեցնենք երթելեկը, որ պիտի տեսէ մէկ ժամ: Ֆրանսայի հրապարակին մէջտեղը պիտի տեղադրենք Արցախի դրօշը, եւ ասիկա պիտի ըլլայ մեր առաջին նախագագուշական քայլը: Ասիկա մեր պայքարին սկիզբն է, մենք կը պայքարինք յանուն Արցախի դրօշին, յանուն Եռագոյնի, յանուն միասնութեան եւ վաղուան յաղթանակին»:

Զանրահաւաքի մասնակիցները ուղղուեցան դէպի Ֆրանսայի հրապարակ, ուր տեղադրուեցաւ Արցախի Զանրապետութեան մեծ դրօշը:

Ֆրանսայի հրապարակին վրայ հանրահաւաքի մասնակիցները հրապարակեցին եզրափակիչ բանաձեւ, գոր ընթերցեց Ազգային ժողովի «Պատիւ Ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Աննա Մկրտչեան:

ԳԻՐՔԵՐՈՒ ԱԲԱՆԴԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿԵՍ ԱԶԳ. ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Գիրքը կը մնայ ճեմարանականներուն մտքի ու երեւակայութեան թռիչքը խթանող հիմնական ազդակը:

Ազգ. Քարեն Եփփէ ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Վարչութիւնը, ինչպէս ամէն տարի, այս տարի եւս գիրքերու հարուստ աշխարհը բացաւ ճեմարանականներուն եւ այցելուներուն դիմաց, երբ կազմակերպեց գիրքերու այս տարուան ցուցահանդէս-վաճառքը:



Արժ. Տէր Զարեհ Քահանայ Շաքարեանի, ճեմարանի Տնօրէնութեան, Շրջ. Միութեան Վարչութեան անդամներուն եւ ուսուցչական կազմին ներկայութեամբ, Երկուշաբթի, 4 Ապրիլ 2022-ի միջօրէին բացուեցաւ «Չարգացում եւ Վերելք» խորագիրը կրող ցուցահանդէսին, ճեմարանի «Չարեհեան» սրահէն ներս:



Ազգ. Քարեն Եփփէ ճեմարանի Շրջ. Միութեան կազմակերպած սոյն նախաձեռնութիւնը մեծ հետաքրքրութիւն ստեղծեց աշակերտներուն մօտ, որոնք ոգեւորութեամբ ծանօթացան ցուցադրուած գիրքերուն: Գիրքերու կողքին ցուցադրուած էր մամուլի ճոխ հաւաքածոյ՝ Ազգ. Քարեն Եփփէ ճեմարանի եւ Շրջանաւարտից Միութեան հրատարակութիւններու եւ արխիւներու, յատուկ ցուցափեղկի մէջ գետեղուած էր Սիմոն Վրացեանի մակագրութեամբ 1954-ին ճեմարանին նուիրուած «Չայաստանի Չանրապետութիւն» հատորը, որ ինքնին մեծ արժեք մը կը ներկայացնէ ճեմարանի արխիւներուն մէջ:



Աւելի քան 10.000 գիրք ցուցադրող սրահը կ'այցելէն գրական, գեղարուեստական, գիտական եւ արուեստի նուիրուած գիրքերով հետաքրքրուողներ:

Ժիրայր Կարապետեան

ՍՐԲԱՎԱՅՐԷ ՈՒՆՏԱՎԱՅՐ

Աւետիք Արք. Տէր Կարապետեան

Միտք, սիրտ եւ հոգի. ասոնք կը կազմեն մարդ անհատի ամբողջ էութիւնը: Մարդը հանգիստ է, երբ միտքը խաղաղ է, սիրտը՝ մաքուր եւ հոգին՝ անքիծ. մարդը հանգիստ է, երբ Աստուած-մարդ եւ մարդ-մարդ յարաբերութեան մէջ հաշտ է. նաեւ մարդը հանգիստ է, երբ հաշտ է իր անձին հետ: Որքան Աստուծոյ մօտենաս, այնքան դուն քեզի ապահով կը զգաս, որքան մտերմանաս Աստուծոյ հետ, այնքան դուն քեզի տարբեր մակարդակի վրայ կը գտնես:

Ինչպէ՞ս մօտենալ եւ մտերմանալ Աստուծոյ հետ: Արդար հարցում մը, որ իւրաքանչիւր քրիստոնէայ կրնայ հարցնել եւ պէ՛տք է հարցնել:

Երբ առաջին անգամ ըլլալով կ'երթանք անձի մը տունը, մենք զմեզ անծանօթ կը նկատենք, իսկ քանի մը անգամ այցելութիւն տալէ ետք կը սկսինք հանգիստ եւ մտերիմ զգալ: Նոյնն է եկեղեցի երթալու եւ Աստուծոյ հանդիպելու պարագան. որքան երթաս Տունը Աստուծոյ այնքան կը ծանօթանաս ու կը մտերմանաս Տանտիրոջ՝ Աստուծոյ, երկնաւոր Զօրոյ:

Ուխտաւորներ մօտեցան ու մտերմացան Աստուծոյ, երբ Շաբաթ, 2 Ապրիլ 2022-ին, կատարեցին ուխտագնացութիւն՝ Պիքֆայայի Սուրբ Աստուածածին Վանքի Սրբավայրէն դէպի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի Ուխտավայր: Տպաւորիչ էր պատկերը, երբ Տիրոջ հետ քալելով ուրիշին համար կ'աղօթէին. «Աշխարհին խաղաղութիւն, հիւանդաց բժշկութիւն, հայ ընտանիքներուն համբերութիւն, Ս. Աթոռին անսասանութիւն...»: Երբ իրենց միտքը, սիրտն ու հոգին ամբողջութեամբ նուիրած էին Աստուծոյ, կտրուելով աշխարհի ճղճիմ մտահոգութիւններէն ու անարդար տագնապներէն. երբ սլացած էին դէպի վեր եւ ճախրելով երկինքը՝ հասած Աստուծոյ:



Անոնց ուղքերը, երբ դէպի Ուխտավայր կ'առաջնորդուէին, իրականութեան մէջ դէպի Աստուծոյ Տունը կ'առաջնորդուէին, ուր հասնելէ ետք ուխտաւորները պիտի ըսէին. «Կը նախընտրեմ գաւիթոյ մէջ իմ անցուցած մէկ օրս, քան թէ հազար ուրիշ օրեր՝ գաւիթոյ դուրս ապրուած» (Սղ 84.10):

Անոնց ուղքերը երբ դէպի Ուխտավայր կ'առաջնորդուէին, հասնելէ ետք անոնք կ'ըսէին. «Սրբարանդ եկայ՝ քեզ տեսնելու, զօրութիւնդ եւ փառքդ դիտելու համար: Որովհետեւ քու սերդ կեանքէն աւելի՝ կ'արժէ. ուստի շըրթներս պիտի գովաբանեն քեզ» (Սղ 63.2-3):

Աստուծոյ հետ մեր ուխտը նորոգած ենք, մտերմացած եւ մտահոգութիւնները բաժնեկցած, իսկ հիմա եկած ենք ու պատրաստ՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Չայրապետի Չայրապետական թափօրով Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջով օրհնուելու եւ այդ օրհնութիւնը մեր տունները տանելու: Եկած ենք մեր Անթիլիասի Ուխտավայրէն՝ Ս. Աթոռէն, մեր հաւատքի հօր օրհնութիւնը առնելու եւ արար աշխարհ բաշխելու:

Եկած ենք մեր ուխտը վերանորոգած եւ մեր աչքերը դէպի երկինք յառած՝ Չայրապետին շրթներէն լսելու. «Ո՛վ Լուսաւորիչ մեծ Չայրապետ, Ս. Աջոյ հովանիին տակ օրհնէ Անթիլիասի Մայրավանքին մէջ հաւաքուած ուխտաւոր ժողովուրդը, սրբէ մեր մեղքերը, մաքրէ մեր հոգեկան ու ֆիզիքական ախտերը, առողջութիւն շնորհէ հիւանդներուն, լուսաւորէ մեր կեանքի խաւար ծամբաները, երկնային բարիքներով ծաղկազարդէ մեր ժողովուրդի գաւակներուն եւ ընտանիքներուն կեանքը»: ամէն:

www.kantsasar.com
www.kantsasar.com
www.kantsasar.com

Պրիմալետ

ԿՐԻԱՅԻ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿԻ ԽԱՂ



Մարուշ Երամյան

Աշխարհի բանը արագ-արագ կը թաւալի, մինչ մարդկութիւնը խոր մրափի մէջ է. ոչ թէ մարդիկը, որոնք ամէն օր ճօճուող դամուկեան սուրին սարսափէն չեն կրնար աչք փակել, այլ՝ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ ինք, որ կորսուե՞ր է թէ սկիզբէն չկար, մենք ենք, որ կարծեր ենք թէ կայ ու փնտռեր ենք:

Ռումբերը արագ-արագ կ'իյնան, իսկ որոշումները կրիայի պէս կը յառաջանան:

Պատիժներու, շրջափակումի եւ այլ «լուծումներու» ծրագիրները մինչեւ որոշում դառնան եւ մինչեւ գործադրուին, տուներ կը քանդուին, երկիրներ կը պարպուին, մարդիկ իրենց գաւազները կը թաղեն, - երբեմն նոյնիսկ այդ իսկ չեն կրնար ընել, - իրենց արժանապատուութիւնը կը գոհեն, իսկ Միացեալ Ազգերու Կազմակերպութիւնը ճամբը կը լսէ, ծրագիրներ կ'որոճայ, որոշումներ կ'առնէ, պատիժներ կը սահմանէ եւ չ'անդադրանար որ արդէն ուշ է, ՇԱՏ շատ ուշ է բան մը փրկելու համար:

Իսկ քանդողը շատ լաւ գիտէ այս բոլորը. այդ է պատճառը, որ առանց



խռովելու խօսք-ծրագիր-որոշում պարապաբանութիւններէն, լկտիօրէն կը շարունակէ իր «գործը», առանց իսկ ըրածը ծածկելու յոգնութիւնը յանձն առնելու:

20-րդ դարու առաջին Չարդը կազմակերպեցին եւ իրագործեցին, բայց ո'չ մէկ պատիժ ստացան:

Նոր Ջուղայի խաչքարերը քանդեցին օր ցերեկով, ոչ ոք առարկեց:

Աշխարհի չորս կողմը գտնուող դարերու յուշարձանները քանդեցին, ո'չ մէկ հետեւանք:

Ինչո՞ւ չշարունակեց, ինչո՞ւ չիրագործեն իրենց ծրագիրները, երբ շատ լաւ գիտեն, որ խօսք-ծրագիր-որոշում ըստաճեցող միայն աչքի փոշի են:

Ահա թէ ինչո՞ւ իրենք կը շարունակեն քանդել, մենք կը շարունակենք ապարդիւն կերպով հաւատք չընծայել բոլոր պոռոտ ճամբերուն, եւ աշխարհը թաւալելու կ'երթայ, դէպի ո՞ր արդեօք:

Հաւանաբար աշխարհի տարբեր անկիւններուն մէջ միշտ ալ պատերազմներ ընթացել են բոլոր ժամանակներուն. մենք ենք, որ չենք իմացած անոնց մասին, կամ իմացել ենք հարիւրաւոր տարիներ ետք, որպէս պատմութեան դաս. դասը սորվել ենք, պատմութիւնը՝ մոռցեր:

Հիմա սակայն տարբեր է. պատերազմը մօտ է մեզի, յաճախ՝ շատ մօտ. եւ անկեղծօրէն չենք գիտեր ինչպէ՞ս վարուիլ մեր մօտիկէն ընթացող եւ ծուխը մեր քիթ-բերանին փչող պատերազմներուն հետ:

Բարեկամուհի մը՝ Նառա Վարդանեանը, կը գրէր իր դիմատետրի էջին վրայ.

«37 տարուան կեանք = ԽՍՀՄ փլուզում+Արցախեան շարժում+90-ականներ+Ապրիլեան պատերազմ+յեղափոխութիւն+Քորոնակեանք+Բառօրեայ պատերազմ+համաշխարհային պատերազմի սկիզբ...»

Մտում ապազոնից նայեմ ու կոկորդիլոսներ լողան շէնքի բակում»:

Յիշեցի հայրս, որ համաշխարհային երկու պատերազմներուն ակաւատես եղեր էր:

Բոլորս ալ՝ Հայաստան թէ Սփիւռք բնակող բոլոր հայերս խենթացած ենք երկու պատճառներով.

Ա. Ո՞ր էր ամբողջ աշխարհը իր սրտցաւութեամբ, երբ Արցախի մէջ հայերուն երիտասարդ սերունդը կը ջարդուէր ամենէն նողկալի ձեւով (ո'չ միայն ազերիներու ձեռքով, այլ նաեւ ... հայերու դաւաճանութեամբ).

Բ. Ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանը եւ Հայաստանին հետ՝ մենք, այս վիճակին որպէս արդիւնք. մենք, որ լաւ կը ճանչնանք թուրքը, շատ լաւ գիտենք, որ կրնայ ամիթէն օգտուիլ, ինչպէս ըրաւ Համաշխարհային Առաջին պատերազմին, խուժել Արցախ-Հայաստան եւ նոր ջարդ մը կազմակերպել:

«Եթէ խաղաղութիւն սիրողները կարենան պատերազմը սիրողներուն նման եւ անոնց չափ պատրաստուիլ, հաւանաբար այս բոլորը չպատահին»:

Մոռցած կը թուինք ըլլալ, թէ խաղաղ ապրելու համար ո'չ թէ պաշտպանուիլ, այլ յարձակիլ է պէտք: Պաշտպանուիլը, թշնամիին քծնիլը եւ անոր բարեկամութիւնը մուրալը մեզ կը դնէ անելի մը առջեւ, որուն գոյութիւնը չենք գգար, որովհետեւ այդ անելը պատ է, այլ ... թափանցիկ ապակի:

Ու կը մոռնանք, որ գործ ունինք թշնամիի մը հետ, որուն գլխաւոր յատկանիշը կեղծիքն է, ստախօսութիւնը, խաբելը: Փորձը ցոյց տուած է, որ այս երեքը իր ամենէն շահաւէտ խաղաթուղթերն են, մասնաւորապէս որ դիմացիները բարի դրացնութիւն, բարեկամութիւն եւ չեմգիտերինչ կ'ուզեն խաղալ:

Գագան է, բզբտելու բնագոյով. միսիոնա՞ր ենք, որ իրեն մարդկութիւն քարոզ ենք ու յետոյ երբ յօշոտուինք, կրկին ու դարձեալ գարմանանք: Բորենիին դէմ քու բոլոր զէնքերդ կազմ ու պատրաստ պահած չե՞ս երթար:

«Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային ժառանգութեան ոչնչացման» բանաձեւին նախագիծը առնուած է Եւրոպական խորհրդարանի լիազուգումար նիստի օրակարգին մէջ եւ քուէարկութիւնը նախատեսուած է 10 Մարտ 2022-ին:

«Շատ կարեւոր դրոյթներից մեկն այն է, որ մշակութային ժառանգութեան ոչնչացումը դիտարկում է Ատրապեճանում պետական մակարդակով տարուող եւ խրախուսուող հայատեսցութեան քաղաքականութեան շրջանակում: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ առաջին անգամ Եւրոպական խորհրդարանը իր բանաձեւում նշում է «հայատեսցութիւն» կամ «արմենֆոպիա» եզրոյթը: Սա խօսում է այն մասին, որ պատգամաւորների շրջանում արդէն յստակ ձեւաւորուել է այդ կարծիքը, նրանք շատ լաւ տեղեկացուած են, թէ Ատրապեճանում ինչպէս է պետական մակարդակով այդ քաղաքականութիւնը խրախուսուում եւ, հետեւաբար, մշակութային ժառանգութեան ոչնչացումը դիտարկում է նաեւ որպէս այս քաղաքականութեան մի մաս»:

Յետո՞յ: Ըսենք թէ քննարկեցին հարցը եւ քուէարկեցին ի նպաստ Արցախի. քննարկել է ետք ի՞նչ լուծում պիտի տան ատրապեճանական երբեք չդադրած եւ չդադրող յարձակումներուն ... Իսկ մինչեւ այդ բոլորը ըլլան, Արցախի մէջ ո'չ պատմամշակութային յուշարձան մնացած պիտի ըլլայ, ո'չ ալ երիտասարդ ու մանուկ: Այս մասին չեն խօսիր անշուշտ:

Աշխարհը նապաստակի թէթեւ վազքով դէպի խորխորատ կ'երթայ, մինչ համաշխարհային կազմակերպութիւններ, կրիայի նման ծանրագլուխ եւ երկարահաշիւ պատիժներ կը մտմտան եւ որոշումներ կը ծրագրեն:

Յստակ է, թէ ո՞վ պիտի շահի մրցանակը: Է՛հ, կեանք է, երբեմն անհեթեթ բաներ ալ կը պատահին:

ՏԵՍԻԼՔԻ...

Սկիզբ՝ էջ 14

Նակ, ծեծկտուք... իսկ լուրերը.

Ուղիղ միացում Ազգային ժողովի ելոյթներու հեռարձակման, ամպիոնին վրայ կը փոխուին դէմքերը, գզգզուք, ընդդիմախօսութիւններ, լուսանկարներ:

«Եւ ո՞վ, եւ ո՞վ է մեր ապագա-»

յին տուել
Անխազելի ընթացք ու գաղափար...»

Կ'անջատեմ միացումը: Կը փակեմ աչքերս ու այս անգամ տեսիլք չէ, այլ դառն իրականութիւն: Մինչ պատգամը կը թելադրէ.

«Վերջին գիտութիւնը էլ ընկնի յուսահատ»

Քո ժողովրդի յանդուրձանը Չհաւատալու իրաւունք ՉՈՒՆԻՍ»:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

- Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբօշեան-Պողիկեան
- Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
- Վեհան Պարսումեան
- Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան
- Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
- Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբօշեան
- Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ՏԵՍԻԼՔԻ ՕՂԱԿԸ



Պերճուհի Աւետեան

Անակնկալ, անսպասելի, գաղտագողի յայտնուեցաւ... դարանակալ այն թշնամիին նման, որուն ներխուժումը ցնցեց երկիրը:

Յայտնուեցաւ, ցնցեց... ամուր ճանկեց կոկորդս, սեղմեց, հասաւ ականջիս խոռոչին ու անխնայ հարուածներով ծակծկեց, միտերուս մէջ ելեկտրական հոսանքի ցնցումներով ազատ, համարձակ դեգերեցաւ:

Ջերմութիւն, դող, մրսածութիւն, յոգնածութիւն:

Օմիկրոնի ախտանշաններ, պսակաձեւ ժահր կոչեալ պատուհասը ինչպէ՞ս ներթափանցեց ու բոյն դրաւ խռչափողիս մէջ...

Երկու ամիս առաջ երկրիս, նոյնիսկ համաշխարհային օրենքներուն որպէս հնագույն քաղաքացի, քաղաքակար ու պարտաճանաչ դնչակալը պահած դեմքիս վրայ, չհամարձակելով այլոց նման շունչ քաշելու համար ծնօտիս ծայրը սահեցնել, երկար ժամեր հերթի սպասեցի «բռնիք/ինիզայ»-ի փակ դրան առջեւ ու ցանկալի պատուաստը ստացայ, յետոյ ինքնագոհ մտածեցի:

«Այսպէս արդէն զինուած եմ աշխարհի ցնցող փորձանքը դիմագրաւելու»:

Է՛հ... միամիտը միայն ես չէի, այլ բոլոր աշխարհի տարածքին պատուաստ ստացողները:

Միջազգայնօրէն պատուաստը դարձաւ



պարտադիր. ճամբորդելու, տեղափոխութեան պարագային քննութեան-թեստի փաստաթուղթ մը անցագրի չափ անհրաժեշտ ու եական:

Մինչ պատուաստ արտադրող ընկերութիւններուն բաժնատերերուն քսակները պարարտացան, ինքնագոհ պատուաստողները դժբախտաբար վարակուեցան: Վիրուսը (ըստ բժշկական վերլուծաբաններուն փոփոխութեան ենթարկուեցաւ, քորոնան դարձաւ Օմիկրոն, Տէլթա...) եւ տակաւին ինչպիսի անսպասելի ձեւափոխման, որ այս պսակաձեւ օղակին վրայ պիտի բազմի ու պատուհասէ աշխարհի խաղաղ բնակչութիւնը:

Իր շրջապատի բժիշկներու յորդորներուն ու թելադրանքներուն կուրօրէն հաւատացող բարեկամուհի մը կը ջանար համոզել զիս, թէ պատուաստ ստացած եթէ չլլայի անպայման հիւանդանոց կը հասնէի. հակաճառելի ու քննարկելի անիմաստ է, բոլորն ալ համակարծիք են, թէ պատուաստը խիստ անհրաժեշտ է... եւ քակի որ հակառակը չեմ կրնար փաստել, կը փորձեմ լռել: Մինչ տրամաբանութիւնս, յաճախ զիս խանգարող տրամաբանութիւնս կը մերժէ հաւատալ... պատուաստ ստացողը ինչպէ՞ս կրնայ վարակը հիւրընկալել հարցականը կը մրճահարէ ուսողութեան խնդիրներուն բաւական ճարտարութեամբ լուծում գտնող ուղեղս:

Անիծեալ այս ժահրը արձակ-համարձակ կը փորձէ ոտնահարել զիս. Ե՛ս յանձնուողը չեմ: Գիշերը ցաւի ու մղձաւանջի մէջ կը տապալտկիմ, երազներ ու տեսիլքներ...

Ա. Տեսիլք

Ջերմութիւնս մարտի հրաւիրող գեփիւռ մը կը շոյէ մազերս, կը փայփայէ քնքշութեամբ, այս

մատները օտար չեն ու միայն անոնք այսչափ հոգատարութիւն կրնան փոխանցել:

Շուք մը կամացուկ կը շարժի, անկողնիս ծայրը ուշադիր նստողի շարժումը կը զգամ:

–Մամ եկար զիս մօտդ տանելու, – կը շշնջամ:

–Չէ, մօտս տեղ չունիս, դուն պիտի առողջանաս անհոգ եղիր, – կը լսեմ կտրուկ շեշտը ու շուքը անմիջապէս կ’անհետայ:

Աշխարհը անդամալուծող այս հիւանդութիւնը յաղթահարելու համար կուլ տուած անիծեալ հակապիոդիկ դեղահատը կը ճանկոտ ստամոքսս...

Բ. Տեսիլք

Պայթող արկերու հեռաւոր ծայներ, ցնցումներ, աչքերս ամուր կը փակեմ, շուքերը կը շարժին, կը վազվզեն:

–Աթս-ն, – կը ճչան:

Աղաղակներ ու ծուխ:

Կը փորձեմ ճչալ, օղակը կը սեղմէ կոկորդս:

–Շտապ օգնութիւն... վա՛յ մեր տղաքը... Օգնեցէ՛ք, – կոկորդիս մէջ կանչը սեղմուող օղակին տակ կը խլանայ:

Շուքերը հոն են դրան առջեւ անշարժ:

Անոնք վրայ երկիւքը անպաշտպան եր, իսկ աշխարհը անտարբեր խիստ մտահոգ ձեւացնելով հանդերձ...

Մատներովս կը փորձեմ քակել օղակը, կոկորդիս ցաւը կը ճնշէ, սուր-սուր ծակող:

Գ. Տեսիլք

Շուքերը կը յառաջանան:

«Օ՛ր անհետ կորածներ, եկաք հաշիւ պահանջելու, իրաւունք ունիք: Այս երկրագունդի վրայ իրաւունքի չափանիշները նժարի թելին գետնողուելով կ’արժեզրկուին մեծերու զօրութեան ու ծանրութեան դիմաց տեղի տալով:

Սեւ ոսկի, կանաչ թղթադրամ ու հասարակ մարդոց կեանքեր:

Բայց թանկագին, անզին, մատողաշ կեանքեր:

Պարտութիւնը ամօթի խառնակ դարձաւ... Աստուած իմ, այս անտանելի օղակը:

Դողը կը ցնցէ մարմինս, կը կծկուիմ, պսակաւոր այս աներեւոյթ ժահրը կը փորձէ քամել ուժերս:

Չէ՛, չեմ յանձնուիր, պայքարելու ուժ կայ տակաւին մէջ ու մանաւանդ յոյս»:

Դ. Տեսիլք

Կիսախաւարիս մէջ գետինը կողք-կողքի նստած են շուքերը...

«Մեր գերավարուած տղաքն են, բոցավառ նայուածներ ունին, օգնութիւն հայցող մարտահրաւեր չէ, այլ պահանջք...

Իրաւունք ունիք, բարձր ամպիոններու վրայէն նետուած խոստումները սին էին, յուսադրիչ հաւաստիացումները, ընդդիմախօսներու ճառերը... խօսք, խօսք, խօսք... տարի ու կէս ու տակաւին չենք գիտեր ինչքա՛ն:

Համայն անտարբերութիւն, նիւթի ու օրուան հացը ապահովելու վազք, համակերպութիւն իրավիճակին հետ. Յանձնուեցանք թէ՛ արդէն ծնկաչոք խաղաղութիւն կը հայցենք...

«Ո՛վ մարդկային արդարութիւն, թող ես թքեմքու ճակատիդ» բանաստեղծը յանդուգն նետեց այս խօսքը, որ հիմա ականջներուս մէջ բզզիւնի նման կը զանգահարէ:

1908 թուականին Թուրքիոյ մէջ սահմանադրութեան հաստատումը ոգեւորեց հայութիւնը, Եւրոպա ու այլ երկիրներ ապաստանած մտաւորականները հաւատալով եղբայրութեան, հաւասարութեան կոչերուն, սահմանադրութեան բերելիք «բարիքներուն» վերադարձան:

Ու եղբայրութիւն քարոզող իթթիհատականները սառնասրտօրէն կազմակերպեցին «Յեղաս-

պանութիւն»-ը: Խրոխտ յեղափոխական երգիչ՝ Սիամակթօն եւս նահատակուեցաւ, մի գուցէ նայելով մահուան աչքերուն մէջ սոսկաց, բայց գոչեց «Ես երգելով կ’ուզեմ մեռնիլ»:

Այս քանիտրոհ անգամ պիտի խաբուինք, պիտի հաւատանք, պիտի խոնարհինք առանց նախապայմաններու:

Ես կ’ատեմ պատերազմները... այս քանիտրոհ պատերազմն է, որուն ժամանակակից եւ մասամբ ականատես կ’ըլլամ: Առաջինը՝ կապոյտ ներկուած ապակիներու, հոսանքազրկման ու մէկ հատիկ «Միկ» օդանաւի մը սաւառման յիշողութիւնն է. ծայնասփիւռն ոգեկոչումներ (այդ օրերուն հեռատեսիլ չունէինք), ոգեւորիչ ազգային երգեր, արաբերէն լեզուով «Յաղթելու ենք»-ի հաւաստիացումներ... ու հողերու յանձնումը Իսրայէլին: Երկու տարի ետք կրկին սահմանային պատերազմ, նոյն ոգեւորիչ վիճակը եւ մասամբ արժանապատուութեան վերահաստատում... Արցախեան հերոսամարտը, որուն կը հետեւէինք հեւ ի հեւ, լուրեր, թերթերու յօդուածներ ու խանդավառութիւն:

Տարիներ ետք սուրիական ներքին պատերազմը, որ Է՛ր մեծ պետութիւններու շահերուն հաշուեյարդարը, ժողովուրդի պառակտման, տարտղման ու երկրի քանդման, յօշոտման, սնանկացման հաշիւն:

Յետոյ քառօրեան ու ամենացաւալին քառասունչորսօրեան...

Ես կ’ատեմ պատերազմները, խաղաղութեան ջատագովներն են... բայց արժանապատիւ խաղաղութեան:

Քրտիւքը պատած է մարմինս: Ծանրացած գլուխս կը բարձրացնեմ բարձին վրայէն, տղաքը հոն են գետինը նստած կողք-կողքի:

Ներեցէ՛ք տղաք, որ ես անկողնիս մէջ եմ, դուք՝ յատակին, ներեցէ՛ք, որ ձեզի օգնելու հնարաւորութիւն չունիմ, ՆԵՐԵՑԷ՛Ք...»

Չէ՛, չենք յանձնուիր:

«Այնքան արշալոյսներ կան, որ տակաւին չեն ծագած...»

Ե. Տեսիլք

Քրտնաթաթախ ու ծանր քայլերով կը բարձրանամ ասֆալթապատ ճանապարհէն, ձեռքիս փունջ կայ կաս-կարմիր վարդերու, անոնք փուշերը առատ են, կը ծակծկեն մատներս: Այսքան գերեզմանաքարերն, որ մէկուն վրայ դնեմ այս վարդերը:

Եռագոյնները կը ծածանին, ես կը սոսկամ, երբեք չէի ուզեր տեսնել եռագոյններուն ծածանումը այս վայրին մէջ:

Ինչո՞ւ, ինչո՞ւ այսքան նոր հողաթումբեր:

Քաղցր նայուածքներ, ժպիտներ ու տապալաքարերուն վրայ փորագրուած թուականներ իրարմէ փոքր գծիկով բաժնուած, փոքրիկ տեղութեամբ կեանքեր 2020-ին աւարտող:

Խունկ կը վառեմ, խունկի ծուխին ամպիկները կը բարձրանան:

«Թող ոչ մի գոհ չպահանջուի...»

Զ. Տեսիլք

Սպիտակ, ջարդուած գոյգ հրեշտակներու պատկերն է, ականներով խորտակուած եկեղեցիի գմբէթը, իսկ քաղաքը... քաղաքը տժգոյն չէր, այլ դժբախտ, այն գեղեցկուհիին նման, որուն ծնողը կը յանձնեն զինք սուլթանի հարեմին:

Կը զգամ, որ ճակատես ու վիզ էս քրտիւքը կը ծորի, կը շնչեմ խունկի բոյրը, կը բանամ աչքերս: Քրտիւքը մարմնես արտաքսած է թոյները, գլուխս թեթեւացած է, կոկորդիս մէջ խայթոց չկայ, թեթեւ հազ մը տակաւին կը յիշեցնէ թէ ծանր քայլերով, բայց երեք շաբթուայ տեւողութեամբ յաղթահարած եմ «քորոնա»-ն:

«Ու պայքար, պայքար երգեցի...»

Կան անտարբերներ, կան համակերպողներ, բայց մենք յանձնուողը չենք: Չենք... կը լսեմ արձագանգը:

Հեռատեսիլը կը միացնեմ, ալիքե-ալիք կը շրջիմ ճնշող մտածումներս ցրելու:

Տափակ գուարճախօսութիւններ, անմակարողակ «ներեալներ», վայրագ միջադէպեր, դա-

ՀԱՐՑԱԶՈՐՈՅ

«ՊԱՏՐԱՍ ԵՄ ԲՈԼՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԽԱՆՏԵԼ ՀԱՅ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՕԳՏԱԿԱՐ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ», «ԳԱՆՁԱՍԱՐ»-ԻՆ Կ'ԸՍԵ ԱՆԴՐԱՆԻԿ ՊՕՂՈՍԵԱՆ

Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ վարժարանի տնօրէն երկրչի. Անդրանիկ Պօղոսեան սուրիահայ վարժարաններու ամենէն երկար ժամանակաշրջանով պաշտօնավարած տնօրէնը ըլլալով «Գանձասար»-ի թղթակիցին հետ զրուցեց իր փորձառութեան մասին: Զետաքրքրական ու ողջունելի է տնօրէնին եռանդն ու աշխատասիրութիւնը երկրի դժուար պայմաններուն մէջ անգամ: 23 տարիներու ծառայութիւնն ունեցող տնօրէնը ժպտաղմ ու լաւատես է, ան կը հաւատայ կրթական հաստատութեան առաջնային դերակատարութեան մարդու նկարագրի կերտման եւ հետաքրքրութիւններու զարգացման մէջ:



2006-ին: Այդ սերունդը պահելով, վարժարանը երկրորդական բաժնի արտօնագիր ունեցաւ եւ անդրանիկ սերունդը վկայուեցաւ 2009-ին, արժանանալով յատուկ գնահատանքի Հայկական կրթական

«Գանձասար»- Պարոն Անդրանիկ, կը խնդրեմ հակիրճ կերպով պատմեք տնօրէնութեան ձեր 23 տարիներու փորձառութեան:

–Նախ շնորհակալ եմ Աստուծոյ, որ ինծի առիթ ընծայեց ազգային, կրթական եւ հայրենասիրական պարտականութիւններ ստանձնելու: Աւարտելով Գամիշլիի պետական համալսարանի գիւղատնտեսական երկրաչափութեան ճիւղը, պետութեան մօտ 21 տարի պաշտօնավարած եմ, նախ որպէս պետական գրասենեակի փոխտնօրէն, ապա ընդհանուր տնօրէն, միեւնոյն ատեն չեմ թերացած ազգային պարտականութիւններուս մէջ: Եղած եմ Գամիշլիի ազգային վարժարանի հոգաբարձութեան անդամ եւ ատենասպետ, ապա եկեղեցւոյ թաղականութեան ատենասպետ, ծառայելով նաեւ քաղաքապետարանէն ներս եւ չորս տարի որպէս անդամ գիւղատնտեսական երկրաչափներու արհմիութեան մէջ, ուստի առիթ ունեցած եմ լաւ փորձառութիւն ձեռք ձգելու:

Վիքթոր Հիւկոն ըսած է. «Եթէ տեսնես այրած դաշտ մը, իմացիր որ թուրքը այրտեղէն անցած է», իսկ իմ նշանաբանս եղած է հետեւեալը. «Այդ այրած դաշտը պետք է վերակենդանացնել, կանաչի վերածել, որպէսզի ըսուի, որ հայը ծաղկեցող եւ շինեց գայն»: Այս է գաղտնիքը, որ որպէս հայ երիտասարդ, ոչ-պետական մարդ կրցայ ներկայութիւն դառնալ աշխատանքովս, պետական տարբեր մակարդակներու վրայ:

23 տարիներու ընթացքին պատիւ ունեցայ պաշտօնավարելու Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրորդ վարժարանէն ներս որպէս տնօրէն: Կրթասիրացը, որ հիմնադրուած է 1924-ին, մանկապարտեզի եւ նախակրթարանի բաժնիներով, 2003-ին ունեցաւ միջնակարգի բաժին, որուն առաջին սերունդը վկայուե-

տնօրէնութեան կողմէ: Հանդէսին ներկայ էին ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը ներկայացնող վարդապետը եւ բարերար տիար Գաբրիէլ Չեմպերճեան, որուն նուիրատուութեամբ վարժարանը կոչուեցաւ իր հանգուցեալ եղբոր՝ Սարգիս Չեմպերճեանի անունով:

Մեր աշակերտները իրենց մասնագիտական ուսումը շարունակեցին դառնալով բժիշկներ, երկրաչափներ եւ զանազան մասնագիտութեանց տէր, ներկայանալի երիտասարդներ: Դպրոցը մինչեւ 2011 տարեշրջան ունեցաւ 711 աշակերտ՝ մանկապարտեզէն մինչեւ երկրորդական կարգ իր երկու ճիւ-

ղութիւնը կը պարտիւր Կրթասիրացի շերտ ընտանիքին եւ ողջ անձնակազմին՝ ըլլան անոնք ուսուցիչներ, վարչական պաշտօնեաներ եւ ժողովականներ, որոնք իրենց լաւագոյնը կու տան, որպէսզի վարժարանը յառաջ երթայ:

Ես համոզուած եմ եւ միշտ կը կրկնեմ, ինչպէս Հայկական կրթական տնօրէնին ըսած էի. «Պատրաստ եմ բոլոր օրէնքները խախտել, հայ աշակերտներուն օգտակար դառնալու համար: Ինծի համար ազգային եւ մարդկային պարտականութիւն է այս կրթօճախին դրնելը բաց պահել: Ինծի համար մեծ ուրախութիւն է, որ այս կրթօճախէն շրջանաւարտ դառնան մեր ազգի զաւակները»:



Այս է մեր կրթօճախին առաքելութիւնը եւ յաջողութիւնը, որոնք կրցանք մինչեւ օրս վայելել եւ ծնողները գոհացնել: Այսօր մեր աշակեր-

տնօրէնութեան թիւն 684, որոնց մեծ մասը հայ է, նաեւ ունինք քրիստոնեայ ոչ-հայախօս աշակերտներ, որոնք կը փափաքին հայերէն դասապահելուն մասնակցիլ եւ հայերէն սորվիլ: Այս կրթօճախին յաջո-

րէրու հայրենիքն է, հետեւաբար Հայաստանը իմ հայրս է, իսկ Սուրիան՝ մայրս եւ ներքին չէ ինծի հա-

التصليّة الفخرية لجمهورية التشيك
بـحـلب
2022-09-18
الأخ الكبير أنترنيك بوغوص وطاقم مدرسة دار التربية من أساتذة و معلمين و إداريين جزيل الاحترام
تحية طيبة
بمناسبة عيد المعلم ، أشكر الله لوجود أمثالك في الملك التربوي إذ إنكم مثال يقتدى في حسن التربية و بذل الجهود للتقدم ببناء وطننا الغالي إلى الكلى و الملأ من الله أن يمن عليكم جميعا و على عائلاتكم الكريمة بالصحة و الترفيق
إن صلحكم في تربية الأجيال لهُر جهاد مقدس و مبارك و يصعب في مصلحة وطننا الحبيب
أعاده الله عليكم جميعا بكل الخير و الترفيق مع خالص تقديري و تحياتي
و كل عام و أنتم بألف خير
التصليّة الفخرية لجمهورية التشيك في حلب
جوزيف صقل

السيرة الذاتية للسيد
م. أنترنيك بوغوص
وُلد أنترنيك بوغوص بتاريخ ٢١ نيسان ١٩٤٩ في مدينة القامشلي – سوريا. تلقى تعليمه الابتدائي في مدرسة الفرات الخاصة للأرمن الأرثوذكس وحصل على الشهادة الثانوية العامة عام ١٩٦٧ من ثانوية العروبة الرسمية ودخل جامعة حلب في كلية الهندسة الزراعية وتخرج منها عام ١٩٧٢. عمل في المؤسسة الحكومية تعين رئيساً لقسم المكثبات في منشأة مزرعة الدولة بجلبة ثم انتقل ليعمل بصفة رئيس قسم المكثبات ونائباً للمدير في مؤسسة المكثبات الزراعية بالقامشلي ثم مديراً عاماً للمؤسسة نفسها من عام ١٩٨٦ حتى ١٩٩٣. تم إيفاده من قبل وزارة الصناعة إلى ألمانيا الديمقراطية وكذلك إلى ألمانيا الغربية. كما تم إيفاده إلى الجامعة الأردنية من قبل مؤسسة إيكاردا العالمية للتنمية الزراعية بمهمة نقل التجربة السورية في مكثبات العنص.
- انتخب عضواً في الإدارة المحلية لمدينة القامشلي لدورة عام 1983
- عضو مؤتمر نقابة المهندسين الزراعيين لأربع سنوات على مستوى القطر .
- إضافة إلى وظيفته في الدولة شغل رئيساً للمجلس المحلي للأرمن الأرثوذكس في محافظة الحسكة.
- ورئيساً للجنة أوقاف طائفة الأرمن الأرثوذكس لأبرشية حلب وتوابعها .
- لمحكمة البداية الشرعية لطائفة الأرمن الأرثوذكس لأبرشية حلب وتوابعها .
- وعضواً في المجلس التشريعي لرئاسة لطائفة الأرمن الأرثوذكس لأبرشية حلب وتوابعها لأكثر من 30 سنة.
- حاز على ميدالية من وزارة الأرمن الشتات في جمهورية أرمينيا.
- ميدالية من وزارة التربية والتعليم العالي في جمهورية أرمينيا.
- ميدالية من السيد رئيس جمهورية أرمينيا لتوطيد الصداقة والأخوة الأرمينية السورية إضافة إلى عدد من شهادات الشكر والامتنان.
- شهادة شكر وثناء من مديرية التربية ونقابة المعلمين في حلب.
- شارك في عدة مناسبات وطنية وثقافية في كل من سوريا وأرمينيا.
- شهادة شكر وتقدير من فرقة (صداق توفان) للموسيقا الشعبية.
- مقابلات ولقاءات مع الكثير من الإذاعات والتلفزيون.
- يعمل حالياً في مجال التربية والتعليم بصفة نائب صاحب ثانوية دار التربية الخاصة منذ عام 1999 ولتاريخه.
- تم تكريمه من قبل جمعية دار التربية الثقافية بميدالية ذهبية تقديراً لجهوده وخدماته في الثانوية .

ղերով՝ գիտական եզրական: 2012-ին, երբ Սուրիոյ պատերազմին պատճառով հիւրընկալ Հայկալը ծանր հարուածներ ստացաւ, մեր աշակերտներէն շատեր ուղղուեցան հայրենիք եւ այլուր, հետեւաբար

տնօրէնութեան թիւն է 684, որոնց մեծ մասը հայ է, նաեւ ունինք քրիստոնեայ ոչ-հայախօս աշակերտներ, որոնք կը փափաքին հայերէն դասապահելուն մասնակցիլ եւ հայերէն սորվիլ: Այս կրթօճախին յաջո-

րէրու հայրենիքն է, հետեւաբար Հայաստանը իմ հայրս է, իսկ Սուրիան՝ մայրս եւ ներքին չէ ինծի հա-

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ



Յարմար շաբաթ է Նոր գործեր ստանձնելու համար: Անհրաժեշտ է բարոյ եւ պատասխանատուութիւն նախատեսող գործի մը ձեռնարկել, որպէսզի արդիւնքը գոհացուցիչ ըլլայ:

ՏՈՒԼ



Անօգուտ բաներու վրայ գումար մի՛ ծախսէք: Առողջ դատեցէ՛ք եւ ձեր ցանկութիւնները զսպեցէ՛ք: Փորձեցէք ծախսելու կողքին կրկնապատկել ձեր շահը:

ԵՐԿՈՒՐԵԱԿ



Պիտի յաջողիք տպաւորել անտարբեր մարդիկ եւ անոնք պիտի աջակցին ձեզի: Եթէ նախաձեռնող ըլլաք, պիտի յաջողիք ձեր գործնական միջավայրը հաճելի վայրի մը վերածել:

ԽԵՅՁԵՏԻՆ



Շաբթուան սկիզբը բարոյ հարցերը աշխուժօրէն ուսումնասիրելու ժամանակ պիտի ունենաք: Աշխատեցէ՛ք աւելի շատ ուշադրութիւն յատկացնել ձեր հարազատներուն:

ԱՌԻՇ



Շաբթուան սկիզբը բարոյ պիտի ընթանայ: Ձեր տրամադրութիւնը փոփոխական պիտի ըլլայ: Ուրիշներուն կարծիքէն մի՛ ազդուիք:

ԿՈՅՍ



Այս շաբաթ կարգ մը աշխատանքներ ստեղծագործ մօտեցում պիտի պահանջեն: Փորձեցէ՛ք Նոր բան մտածել, քան ուրիշներուն օրինակին հետեւիլ:

ԿԵՒՈՔ



Ձանացէ՛ք այս շաբաթ հնարաւորինս քիչ ուշադրութիւն գրաւել, քանի որ մարդիկ պիտի նախանձին ու վատաբանեն ձեզի:

ԿԱՐԻՃ



Դուք ինքնավստահ եք եւ դրական լիցքերով կ'օժտուէք ձեզի ընկերակցողները, քանի որ հոգեկան բարոյթներէ չեք տառապիր:

ԱՂԵՂՆԱՌՐ



Ղեկավարներու հետ երբեմն դժուար է լեզու գտնել, յատկապէս եթէ անոնք յառաջադէմ չեն: Փորձեցէ՛ք օգնել անոնց:

ԱՅՏԵՂԶԻՐ



Շաբթուան սկիզբը յաջողութիւնը պիտի թակէ ձեր դուռը: Դուք կը վստահիք ձեր ուժերուն, առանց ուրիշներուն ապաւինելու:

ՋՐՅՈՍ



Ճամբորդութեան ծրագիր մը ձեզ պիտի գրաւէ ու արձակուրդի պիտի մեկնիք այս շաբաթ: Աշխատանքէն հեռու մնալը, դրական անդրադարձ պիտի ունենայ ձեր վրայ:

ՋՈՒԿ



Խնդրայարոյց հարցերու գծով պիտի վիճիք սահմանափակ մտածողութեան տեր մարդոց հետ, փորձելով լուսաւոր մտքեր ներարկել անոնց աշխարհահայեացքին մէջ:



Վահէ Միկանտեան

ԵՒ ՄԵՆՔ ԶԻՄԱ

Որքա՞ն ուշադրութիւն կը դարձնէք ձեր փոքրերուն ու պատանիներուն ստեղծագործած գծապատկերներուն: Երբեւէ փորձա՞ծ եք խնդրել անոնցմէ, որ իրենց առօրեայ զգացումները, յոյզերը, ուրախութիւնն ու տխրութիւնը արտայայտեն նկարչութեամբ:



Ներկայիս բոլոր հոգեբանները կը հաստատեն նկարչութեան բարերար ազդեցութիւնը դաստիարակութեան եւ ուսուցման բազմազան ոլորտներուն վրայ, միւս կողմէ հոգեբանական սերտողութիւնները օրըստօրէ աւելի լուսարձակի տակ կ'առնեն նկարչութեան անմիջական ազդեցութիւնը նկարագրի եւ մտածելակերպի կերտման գործընթացին վրայ:

Եթէ պահ մը կանգ առնենք ու մտածենք թէ ի՞նչ բաներ կրնան ներշնչել ու մղել արտայայտուելու, անմիջապէս պիտի եզրակացնենք թէ՛ Նորը, անտվորը, տարօրինակը, վեհը, գեղեցիկը եւ ողբերգականը անպայման կը ստիպեն մեզ արտայայտուիլ: Այդպէս ալ եղած է նախնադարեան մարդուն պարագան: Ան իր մտքերն ու զգացումները արտայայտելու համար փորած է քարը, պատկերագրողած է ժայռը՝ նպատակ ունենալով թէ՛ արտայայտուիլ եւ թէ՛ իր ձեռքբերած Նորութիւնները իբրեւ գիտելիք փոխանցել:

Հնագոյն ժայռապատկերները ունին Ն.Ք. 5-6 հազարամեակներու տարիք ու տարածուած են աշխարհով մէկ: Սակայն հնագետները բացարձակապէս կը հաստատեն, թէ այս ժայռապատկերները մեծաւ մասամբ յայտնաբերուած են Հայկական Բարձրաւանդակի տարածքին, մասնաւորապէս Գեղամայ, Վարդենիսի եւ Միւսեաց լեռնաշխարհի տարածքին:

Հետաքրքրական փաստերէն մէկն է նաեւ այս տարածաշրջանի ժողովուրդին իմաստութիւնը, որ թարգմանուած է բազմաբնոյթ նիւթեր կրող ժայռապատկերներով, մինչ ուրիշ ժողովուրդներու մօտ կը տիրէին հիմնական մէկ-երկու նիւթեր:

Հայ ժողովուրդի նախահայրերը քաջատեղեակ եղած են բազմապիսի Նորանշաններէ (phenomenon): Նկարած են գետեր, լիճեր, ինչպէս նաեւ բնական երեւոյթներ՝ ծիածան, կայծակ ու երկնաշին մարմիններ՝ արեւ, լուսին: Անոնք նկարած են նաեւ բուսական եւ կենդանական աշխարհի տարբեր եւ մանաւանդ այծեր, որոնցմէ այս ժայռապատկերները կոչուած են նաեւ «իծեգիր»:

Նկարած են նաեւ իրենց գործունեութիւնները՝ գիւղատնտեսութիւն, սայլեր, որս ու որսի միջոցներ, Նոյնիսկ գիտական ըմբռնումներ ու տուեալներ որոնց մէջ՝ քարտեզներ եւ օրացոյցներ: Այս բոլորը կ'արտացոլեն այն իրողութիւնը, թէ Հայկական Լեռնաշխարհը աշխարհասփիւռային կեդրոն եղած է, հնդեւրոպական ժողովուրդին բնօրրանը:

Ժայռապատկերները հետագային իրենց տեղը կը գիշին աւելի կատարեալ համակարգերու, ինչպէս՝ սեպագիրը եւ աւելի ուշ հնչիւնային գիրերը, սակայն անոնք մինչեւ օրս կը պահեն իրենց նշանակութիւնը իբրեւ պատկերագրօրէն մեզի հասած միակ սկզբնաղբիւրը՝ անյիշելի ու խոր անցեալի իրականութեան:

Հին հնդկական աւանդութեան համաձայն, ի սկզբանէ մարդիկ շատ աւելի ուշիմ էին եւ ընդունակ ու անոնք մէկ անգամ լսելով իմաստու-



թիւնը իրենց ուսուցիչներուն շուրթերէն, կը մտապահէին գայն իրենց ողջ կեանքին ընթացքին եւ կը փոխանցէին իրենց յաջողութիւններուն, սակայն ժամանակները փոխուեցան, մարդոց ունակութիւնները թուլցան, անոնց յիշողութիւնները բթացան եւ որպէսզի նախնեաց գիտելիքները չմոռցուին ու չկորսուին ստեղծուեցան գիրերը ու անոնց միջոցաւ հետագայ սերունդներուն փոխանցուեցան սրբազան իմաստութիւններ:

Ք.Ե. 7-րդ դարուն, հայոց մեծ գիտնական Անանիա Շիրակացի կը հաստատէ ու կը գրէ. «Նախնիներու զգայարանները աւելի սուր էին քան այժմեան մարդկանը, ուստի կարողացան ոչ միայն արեգակի ընթացքը նկարել, այլեւ միւս բոլոր լուսաւորներունը, ոչ միայն նկատեցին եւ ուսումնասիրեցին, այլեւ դրոշմեցին գանոնք քարերուն վրայ»:

Այսօր, այս բոլորէն ետք, հայ ազգը ունի իր իւրայատուկ եւ ինքնուրոյն Մայրենին՝ Մեսրոպեան Այբուբենը, մտածելու, զգալու, արտայայտուելու, մերօրեայ երիտասարդութիւնը գայն ինչպէ՞ս կ'օգտագործէ, մանաւանդ իբրեւ ազգասեր ու հայրենասէր երիտասարդութիւն...

Պատասխանները ձեր բջիջային հեռաձայններու պատուհաններուն մէջ են, նայեցէ՛ք:



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵՆՏՐԸՆ

- Սուրիոյ Պասքեթի աղջկանց Բ. դասակարգի մրցումներուն, Դամասկոսի մէջ ՅԱՐԸՄ-ի կազմը յաջողեցաւ 71 - 66 արդիւնքով պարտութեան մատուցել հիւրընկալ Ֆէյհաա-ը: Չոյգ խումբերը կրկին պիտի հանդիպին Շաբաթ, 9 Ապրիլին, Յալէպ, ՅԱՐԸՄ-ի մարզադաշտէն ներս:




- Սուրիոյ հաւաքականի հայ խաղացող Մարտիկ Մարտիկեան, Սուրիա-Իրաք հանդիպումին սկիզբը ստացաւ ծանր վնասուածք մը, որուն հետեւանքով դուրս եկաւ դաշտէն: Մարտիկ վերջին երկու մրցումներուն կրկին կրցաւ իր տեղը գրաւել հաւաքականի հիմնական կազմին մէջ: Լիբանանի հետ կայացած հանդիպումին, ան տուգանային հարուածով նշանակեց Սուրիոյ երկրորդ կողմը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՆԿԱՍ ԱՍՈՅԵԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ ԱՌՈՅԵԱՆ

Պուտափեշտի մէջ տեղի ունեցած Եւրոպայի ըմբշամարտի պիտիեանական մրցումներուն, Հայաստանի յունահռոմեական ոճի ըմբիշ Մալխաս Ամոյեան նուաճեց ոսկի մետալ:



Հայ մարզիկը 77 քկ. ծանրութեան կարգի եզրափակիչ մենամարտին յաջողեցաւ պարտութեան մատուցել թուրք մրցակիցը եւ ձեռք ձգել տիտղոսը: Նոյն մրցաշարքին Հայաստանը ներկայացնող Գեորգ Ղազարեան 60 քկ. ծանրութեան կարգի մրցումներուն գրաւեց 3-րդ հորիզոնականը եւ արժանացաւ պրոնզ մետալի:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

«ԶԱԹԱՐ-2022»-Ի ՎԻՃԱԿԱԳԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՏԱՌԻՎՅԻ ՄԵՉ

Անցեալ շաբթուան ընթացքին, Բաթարի մայրաքաղաք Տաուհայի մէջ տեղի ունեցաւ 2022-ի համաշխարհային ֆութբոլի մրցումներու վիճակահանութիւնը: Մասնակից հաւաքականները բաժնուեցան ութ խմբակներու, որոնք կրեցին հետեւեալ պատկերը: Ա. խումբ՝ Բաթար, Հոլանտա, Սենեկալ, Էքուատոր

GROUP A	GROUP B	GROUP C	GROUP D
GROUP E	GROUP F	GROUP G	GROUP H

Բ. խումբ՝ Անգլիա, ԱՄՆ, Իրան, Ուելզ /Ուքրանիա յաղթող
 Գ. խումբ՝ Արժանթին, Մեքսիք, Լեհաստան, Սեուտական Արաբիա
 Դ. խումբ՝ Ֆրանսա, Փերու/Աւստրալիա յաղթողը, Դանիա, Թունուզ
 Ե. խումբ՝ Սպանիա, Զոսթարիքա/Նիզլանտա յաղթող, Գերմանիա, Ծափոն
 Զ. խումբ՝ Պելճիքա, Զորուաթիա, Մարոք, Զանատա
 Է. խումբ՝ Պրագիլ, Չուիցերիա, Սերպիա, Զամբոն
 Ը. խումբ՝ Փորթուկալ, Ուրուկուեյ, Հարաւային Զորիա, Կանա:
 Ըստ նախնական գնահատականներու, դժուարագոյն խմբակը եղաւ 7-րդ խմբակը որուն մաս կը կազմէ Պրագիլ: Մրցումները տեղի պիտի ունենան 21 Նոյեմբերէն մինչեւ 18 Դեկտեմբեր:

ԽԱԶԲԱՆ (ՄԻ 385)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- 2ապել Եսայեանի վիպակներէն. «..... Պարտէզները»: Եւս:
- Յոգնակերտ մասնիկ: Տարածքի միաւոր: Կշիռքի լեզու: Գրաբար՝ ո՛ր:
- Հակառակ՝ աղէկ: Տարի: Ստեղծուած էակ:
- «Եպիսկոպոս» բառին կրճատումը: Նոխազի կարուած կաշի: Ձայնակիչ:
- Տառի մը անունը: Սուրիոյ պտղաբեր ծառերէն: Ձայնակիչ:
- Հինգշաբթի: Ոտքի բթամատ: Չարագցում:
- Հակառակ՝ 4030: Տարի: Արական անուն:
- Հակառակ՝ դատական նիստ: Յօժար:
- Մատչելի գին: Թուշ:
- Անձնիչխան: Տարածքի միաւոր: Խօսուն:
- Յոգնակերտ մասնիկ: Թողութիւն տուող:
- Շարք:


Ուղղահայեաց

- Աչքերը յառել: Ժամանակ:
- Իրականութիւնը պատկերացնելու ձգտող գրագետ: Տառի մը անունը:
- Հակառակ՝ 2030: Աղօթամատեան մը:
- Երկբարբառ: Անձնական դերանուն: Հակառակ՝ տարածքի միաւոր:
- Անմիջական լուծումի կարօտող:
- Արգելական: Չոհ:
- Տարի: Երկրի մը օդի որպիսութիւնը:
- Տառի մը անունը: Տօթ:
- Եւրոպական երկիր: Որոշուած գին:
- Հակառակ՝ տարածքի միաւոր: Սարսափ: Շաղկապ:
- Հաստատական պատասխան: Իգական անուն: Հակառակ՝ ցերեկօր:
- Փայլփլուն:

ԽԱԶԲԱՆ (ՄԻ 384)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

ԼՈՒԹՈՒՄ



ՍՕ ԽԱՉԻ ՄԱՅՐԵՐՈՒ...

Սկիզբ՝ էջ 1

Տօնակատարության հայերեն բացման խօսքը արտասանեց Լենա Միսաքեան: Ան գովերգելով գարնան գարթունքի հետ գեղեցկացած բնությունը, անդրադարձաւ իգական սեռի գեղեցկության եւ ծաւա-



լած բազմերանգ գործունեության, կշեղով, որ կանայք վճռորոշ ազդեցություն ունին կեանքի ձեւաւորման մէջ, իսկ ՍՕ Խաչը որպէս կանացի միություն իր կառոյցով եւ բեղուն



գործունեութեամբ պատկառելի ներկայութիւն եղած է սուրիահայութեան կեանքէն ներս:

Արաբերէն բացման խօսքով հանդէս եկաւ Յուրի Մուսալլի: Ան շնորհաւորեց խաչուհիները այս տօնին առիթով: Ապա նկարագրելով հայ մայրը որպէս սիրոյ խորհրդանիշ եւ առաջին ուսուցիչ, ակնարկով, որ ՍՕ Խաչը իր հիմնուած օրէն մեծ դերակատարութիւն ունեցած է սուրիահայութեան եւ ի մասնաւորի հալէպահայութեան կեանքէն ներս, մատուցելով բժշկական, դաստիարակչական եւ այլ ծառայութիւններ՝ շնորհիւ իր նուիրուած խաչուհիներուն: Այս առիթով ան շնորհակալութեան խօսք ուղղեց երկրիս վսեմաշուք նախագահին եւ առաջին տիկնոջ, որոնք նիւթական եւ բարոյական աջակցութեամբ գահուրթ կը շարունակէ գոյատեւել մինչեւ օրս, շրջանցելով տիրող բոլոր դժուարութիւնները:

Մօր նուիրուած առիւթնող ասմունքով հանդէս եկաւ Աննա Սադպագարեան, որմէ ետք սուրիական հայրենիքի փառքը գովերգող արաբերէն երգով մը ներկաները խանդավառեց Կարօ Գուշաքեան:

Հանդիսավարը լայն գիծերով մէջ ներկայացուց օրուան բանախօսին՝ Աւօ Գաթրեանի կենսագրականը, անոր տարած բեղուն աշխատանքը, որպէս բանասիրական, պատմաքաղաքական ուսումնասիրութիւններու եւ շարք մը հայերէն արաբերէն գիրքերու

նաեւ ազգային երգերու հեղինակ: Բանախօսը ներկայացուց հայ մօր դերը երեք առանցքներու ընդմէջէն՝

1. - Մօր բնութագրումն ու անոր առաքելութիւնը
2. - Հայ մօր առաքելութիւնը
3. - Միութենական մօր առաքելութիւնը:

Ապա ակնարկով ըսաւ, որ մայրը իր կեանքի իւրաքանչիւր վայրկ-

եանը կ'անցընէ խնամելով եւ հոգատարութեամբ, սորվեցնելով սիրել, յարգել եւ բարի ըլլալ, իսկ մեր պատմութեան մէջ հայ մօր դերը եղած է եզակի, յատկապէս եկեղեցական, մշակութային, ընկերային, բարեսիրական, քաղաքական եւ ազատագրական պայքարներու մէջ, ինչպէս՝ 451-ին, 1918-ին, 1988-ին եւ նորօրայ մղուած Արցախի ազատագրական պայքարին մէջ:



Գաթրեան յայտնեց, որ կոտորուած ժողովուրդի մը աղքատ գիրկին մէջ ծնաւ Հայ Օգնութեան Միութիւնը՝ ՍՕԽ-ը: Ան իր մեծագոյն նպաստը բերաւ 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը ապրած ժո-



ղովուրդի հայակերտման, դառնալով սպեղանի մեր որբերուն եւ կարիքաւոր ընտանիքներուն:

Ապա այս առիթով ան լուսարձակի տակ առաւ ՍՕ Խաչի ընկերաբժշկական կեդրոնը, որ շնորհիւ նուիրեալ մայրերուն եւ քոյրերուն կրցաւ Հալէպի տագնապալի տարիներուն հոգատարութիւն ցուցաբերել ժողովուրդին, իսկ ՍՕ Խաչ-Ազգային պատասխարանը ՍՕ Խաչի մայրական հոգատարութեան հայելին դարձաւ: Բանախօսը այնուհետեւ լուսարձակի տակ առաւ Սուրիոյ պատերազմի պայմաններուն մէջ անգամ Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ ՍՕ Խաչի ծաւալած նուիր-

ական աշխատանքը:

«Սկիւռքի վերադարձաւորման մէջ որքան ալ կարեւորեցը հայ երիտասարդին դերը, անոր հիմքը կը մնայ անկոկոխ՝ Հայ Մայրը:

Արդարեւ, ՍՕ Խաչի իւրաքանչիւր անդամուհի պէտք է գիտակցի, որ ինք ջատագովն է ազգային արժէքներու պահպանման եւ տէրն է ազգային ու մարդկային արժանապատուութեան:

Սիրելի՛ խաչուհիներ, դուք կը շարունակէք ձեր նուիրական առաքելութիւնը՝ ձեր նիւթական եւ բարոյական գերագոյն գոհաբերութեան գնով, հաւատարիմ մնալով ՍՕ Խաչի կոչումին», ըսաւ բանախօսը:


Վերջապէս ան յարգանքի իր խօսքը ուղղեց նահատակ գաւալկ-



ներ ունեցող մայրերուն, որոնք կանգուն պահեցին իրենց ընտանիքները:

Բանախօսին խորհրդածութիւններով լիցքաւորուած հանդիսատեսը վայելեց հրամցուած «Թարմ Ծաղիկներ» երգը, զոր հմայիչ երգեցողութեամբ մեկնաբանեց Կալին Պալապանեան:

Օրուան հանդիսավար Շողիկ Տեր Պօղոսեան բեմ հրաւիրեց Շրջ Վարչութեան ատենապետուհի Սիրան Ամպարճեանը՝ Շրջ Վարչութեան խօսքը ուղղելու: Ամպարճեան Մայր բառը բնութագրելով անդրադարձաւ մօր սրբազան առաքելութեան, դիտել տալով իր անլոյսի եւ ներշնչման աղբիւր է, կամքի ամրոց, արժանապատուութեան դպրոց եւ մշակոյթի ու անհղութեանց անքուն պաշտպան: Ան պարզեց ՍՕ Խաչի գործունեութեան նպատակը, որպէս ՀՅԴԽ-ի հարազատ շառաւիղ, ապա Մուշեղ Իշխանի հետեւեալ տողերով եզրափակեց իր խօսքը. «Երբ հայ կինը կը գիտորարգրուի խաչով, ան ոչ միայն թանկագին նպաստ մը կը բերէ օգնութեան միութեան այն-



քան կենսական նպատակներուն, այլ նաեւ՝ հոգեպէս եւ մտայնութեամբ կը դառնայ պայքարող հայ կին»:

Յատկանշական էր ՀՅԴԽ-ի ներկայացուցիչ Նելլի Վեքիլեանի ներկայութիւնը հանդիսութեան: Ան ՀՅԴԽ-ի խօսքը ուղղելով ներկաներուն ըսաւ. «Հայ կինը մայր է իր գա-



ւակներուն, հայ գիտորդին, աշխարհի չորս ծագերուն ցրուած հայ համայնքներուն, հայրենիքին: Պատմութեան օրերուն եւ այս չարաբաստիկ օրերուն, միշտ ի մտի ունենանք ՀՅԴԽ-ուհիներու, հայ մայրերու, քոյրերու եւ դուստրերու աննկուն այս միութիւնը, որ հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան ամենադաժան օրերուն իր 112 տարիներու գործունեութեամբ մայրութիւն ըրաւ որբերու, այրիներու, անօգնականներու եւ հոն, ուր հարկ է:

ՀՅԴԽ-ի Կեդր. Վարչութեան անունով կը խնդրեմ պահ մը անդրադառնալ մեր յանձնառութեանց եւ մինչեւ օրս արձանագրած յաջողութեանց ցանկերուն: Ձեզ մէջ իւրաքանչիւրին կ'ըսեմ՝ ձեր վարձքը կատարէ: Յառաջ դէպի նոր նուաճումներ»:

Հանդիսութեան ւարտին, ՍՕ Խաչի Շրջ Վարչութիւնը գնահատեց բազմավաստակ խաչուհիներ,



որոնք 30 տարիներէ աւելի բեղուն գործունեութիւն ծաւալած են միութեան շարքերուն մէջ:

Այս առիթով, ՀՅԴԽ-ի ներկայացուցիչին ձեռնամբ «Կանթեղ» շքանշանով օժտուեցաւ հեռաւոր Ալըստրայիայէն ժամանած վաստակաւոր խաչուհի Վեհան Պալեոգեան՝ առ ի գնահատանք 1972-էն ի վեր իր տարած նուիրական աշխատանքին: Ապա յաջորդաբար գնահատագիր-

ներով պարգեատրուեցան հետեւեալ խաչուհիները.

Շողիկ Կիրակոսեան, Մարի Միսեան, Մարինա Պէպքեան, Ալին Քիրիւմլեան, Չեփիւռ Կուրդիկեան, Անի Գըվըրեան, Անի Նազարեան, Թերեզ Տ. Սարգիսեան, Անի Արուշեան, Սօսի Ղազելեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ Տ. Չարեհ Քին. Շաքարեանի «Պահպանիչ» աղօթքով եւ ՍՕԽ-ի քայլերգով: